



WOMEN
AGAINST
VIOLENCE
EUROPE

Պատերազմի ընթացքում և հետպատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելում և արձագանքում

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՁԵՌՆԱՐԿ

Հրատարակիչ՝ WAVE (Կանայք ընդդեմ բռնության Եվրոպա)
Հասցե՝ Bacherplatz 10/6, A-1050 Vienna
Հեռախոսահամար՝ +43-1-548 27 20
Էլ-հասցե՝ office@wave-network.org
Կայք՝ www.wave-network.org
Գրանցման համար՝ 601608559

Հեղինակներ՝ Ինեսսա Ադիլխանյան, Եկատերին Գամախարիա, Գորիցա Իվիչ
Շապիկի պատկեր՝ iStock.com/DrAfter123
Հրատարակման վայր և տարի՝ Վիեննա, Ավստրիա, 2023

Հրատարակությունն իրականացվել է ԵԱՀԿ ֆինանսական աջակցությամբ WIN ծրագրի շրջանակներում: Դրանում արտահայտված կարծիքները, մեկնաբանություններն ու եզրահանգումները հեղինակներին անձնական տեսակետներն են և չեն ներկայացնում ԵԱՀԿ-ի, նրա դոնորների կամ անդամ պետությունների տեսակետները:



Պատերազմի ընթացքում և հետպատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելում և արձագանքում

Դասընթացի ձեռնարկ

Ներածություն	4
Ընդհանուր ակնարկ և նպատակներ	4
Նախագիծը	5
Դասընթացը վարելու ցուցումներ	7
Նախատեսված լսարան և ժամանակացույց	7
Դասընթացավարի ուղեցույց	7
Ֆեմինիստական սկզբունքներ	12
Հոգեվնասվածքին իրազեկ դասապրոցես	13
Առկա և հեռակա դասավանդում	15
Ծանոթացում դասընթացի հետ	17
Մասնակիցների ու դասընթացավարների ծանոթացում մերձեցման խաղերի միջոցով, ընդհանուր կանոնների սահմանում, ակնկալիքների հայտնում	17
Մոդուլ 1: Պատերազմի ազդեցությունը կանանց ու աղջիկների վրա	20
Ներածություն	20
Հուշումներ դասընթացավարների համար	21
Մոդուլի պլան	21
Դասի պլանը	22
Մոդուլ 2: Պատերազմի ժամանակ և դրանից հետո կանանց և երեխաներին պաշտպանելու համար պատասխանատու գլխավոր դերակատարները	28
Ներածություն	28
Հուշումներ դասընթացավարների համար	28
Մոդուլ Պլան	29
Դասի պլան	29
Մոդուլ 3: Կանանց հկ-ների կողմից կիրառվող ռազմավարությունները՝ կապված պատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելման և արձագանքման հետ	32
Ներածություն	32
Հուշումներ դասընթացավարների համար	32
Մոդուլ Պլան	33
Դասի պլան	33
Մոդուլ 4: Շահերի պաշտպանություն	38
Ներածություն	38
Հուշումներ դասընթացավարներին	38
Մոդուլ Պլան	39
Դասի պլան	39
Դասընթացի ամփոփում և փակում	46
Աղբյուրներ	48

Ներածություն

Ձեռնարկում զետեղված է պատերազմի ընթացքում և հետպատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելման և դրա արձագանքման թեմայով չորս մոդուլից բաղկացած դասընթաց վարելու վերաբերյալ ընդհանուր բնույթի ուղղորդող տեղեկատվություն՝ դասերի պլաններով: Դասընթացի ձեռնարկը հիմնված է WAVE կազմակերպության կողմից ԵԱՀԿ-ի հետ համագործակցությամբ 2022թ. մշակված գործիքակազմի վրա, որը հրատարակվել է «Պատերազմի ընթացքում և հետպատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելում և արձագանքում. կանանց հկ-ների փորձառությունները և առաջարկները» վերնագրով:¹

Ընդհանուր ակնարկ և նպատակներ

Գենդերային բռնությունը մարդու իրավունքների ամենատարածված և կործանարար խախտումներից է աշխարհում: Դրա մասշտաբները շատ մեծ են, իսկ հետևանքները՝ երկարատև: Զինված հակամարտությունն էլ ավելի է մեծացնում բռնության ենթարկվելու հավանականությունը և ահազանցում է կանանց ու աղջիկների կյանքին սպառնացող վտանգները: Հակամարտությունից ծնված գենդերային բռնությունը տարբեր ձևեր է ստանում, ներառյալ՝ սեռական բռնություն (բռնաբարություն, սեռական ոտնձգություններ և այլն), ընտանեկան բռնություն, կանանց ու աղջիկների թրաֆիքինգ, հարկադիր մարմնավաճառություն, սեռական ոտնձգություններ, խտրականություն, ինչպես նաև իրավունքների մերժում: Հակամարտության ավարտով, սակայն, կանանց ու աղջիկների նկատմամբ բռնությունը չի դադարում: Ավելին, այն հաճախ ավելի ընդունելի ու հանդուրժելի է դառնում հասարակության կողմից՝ պայմանավորված նման բռնության հանդեպ թողտվության ու քաջալերման հասարակական ու մշակութային մոտեցումներով ու համոզմունքներով:

Դասընթացի սույն ձեռնարկը նախատեսված է հետևյալ նպատակների համար.

- Օգնել դասընթացավար/ներին մատուցելու հակամարտությամբ պայմանավորված գենդերային բռնության, ինչպես նաև պատերազմի ընթացքում ու դրան հաջորդող ժամանակահատվածում այն կանխարգելելու, դրան արձագանքելու լավագույն պրակտիկաների/ռազմավարությունների (որոնք կիրառվել են կանանց հկ-ների կողմից) մասին ներածական, մասնակցային և ինտերակտիվ դասընթաց:
- Հզորացնել մարդասիրական համատեքստում աշխատողների կարողությունը և տրամադրել մասնագիտացված ծառայություններ բռնությունից տուժած և այն վերապրած կանանց:
- Դասընթացի մասնակիցների համար ստեղծել ապահով տարածք, որպեսզի նրանք փոխանակվեն հակամարտության և բռնության իրենց փորձառություններով, դրանց մասին իրենց հայացքներով ու մտքերով, խրախուսել նրանց օգտագործել իրենց ունեցած հմտությունները, գիտելիքն ու փորձը իրարից սովորելու և նոր առաջարկների ու ռազմավարությունների մտահղացման համար:

Ձեռնարկը բաղկացած է երկու մասից:

Մաս 1 – Ընդհանուր բաժնում զետեղված է ընդհանուր բնույթի օժանդակ տեղեկատվություն այն մասին, թե ինչպես վարել դասընթացները, որպեսզի դրանք արդյունավետ լինեն, ինչպես պատրաստվել դասընթացի

1 «Պատերազմի ընթացքում և հետպատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելում և արձագանքում. կանանց հկ-ների փորձառությունները և առաջարկները» գործիքակազմը հինգ լեզուներով (անգլերեն, հայերեն, բոսնիերեն, վրացերեն և ուկրաիներեն) հասանելի է WAVE կազմակերպության կայքում՝ <https://wave-network.org/toolkit-prevention-response-gbv-war/>

անցկացմանը, ինչպես կիրառել ֆեմինիստական մանկավարժական սկզբունքների մասին տեսական ու պրակտիկ տեղեկատվությունը դասընթացը վարելիս, ինչպես կողմնորոշվել զգայուն գրուպների ու քննարկումների ժամանակ՝ կիրառելով հոգեվնասվածքին (տրավմա) իրազեկ դասավանդման սկզբունքներ:

Մաս 2 – Բուն դասընթացում ներկայացված են դասընթացի չորս մոդուլները և վարողների համար նախատեսված ցուցումները, որոնք նպատակ ունեն ուղղորդել նրանց լավագույնս մատուցելու դասընթացը: Յուրաքանչյուր մոդուլ պարունակում է դասի նպատակների, վարողի համար նախատեսված հուշումների, մոդուլի ընդհանուր կառուցվածքի, դասի մանրամասն պլանի մասին տեղեկատվություն, ներառյալ՝ յուրաքանչյուր մոդուլի անցկացման համար պլանավորվող ժամանակը, տեսական հուշումներ, հղումներ հավելյալ տեղեկատվության աղբյուրների և ցուցումներ խմբային աշխատանքների համար:

Դասընթացի չորս մոդուլները փոխկապակցված են, ուստի լավ կլինի դրանք մատուցել հաջորդաբար:

Մոդուլ 1-ի նպատակն է ուսումնասիրել զինված հակամարտության ազդեցությունը կանանց ու աղջիկների վրա, ներառյալ՝ այնպիսի հարցեր, որոնք փոխհաստվում են ռիսկի գործոնների հետ, մասնավորապես՝ տարիքը, հաշմանդամությունը, գենդերային ինքնությունը, սեռական կողմնորոշումը և էթնիկ պատկանելությունը: Մոդուլը նաև տեղեկություններ է տրամադրում գենդերային բռնության տարածված ձևերի մասին, թե ինչպես կարող է կանանց ու աղջիկների և այլ խոցելի խմբերի վրա զինված հակամարտության գենդերային ազդեցության մասին պատշաճ ըմբռնումը նպաստել, որ մասնագետները/շահագրգիռ կողմերն իրենց ծրագրերում կամ գործողություններում հաշվի առնեն ու ճշգրտորեն անդրադառնան բնակչության այս խմբի կարիքներին՝ տալով դրանց համապարփակ ու գենդերային զգայունություն դրսևորող լուծումներ:

Մոդուլ 2-ի նպատակն է մասնակիցներին օգնել բացահայտել, թե որոնք են այն առանցքային պետական ու ոչ պետական դերակատարները, որոնք պատասխանատու են կանանց ու աղջիկներին պատերազմի ժամանակ և դրանից հետո պաշտպանելու համար, համակարգային արձագանքի դեպքում ինչ միջոցներ ու քաղաքականություններ պետք է իրականացվեն, որպեսզի կանխվի և դադարեցվի կանանց ու աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձևերի գործադրումը:

Մոդուլ 3-ի նպատակն է մասնակիցներին հնարավորություն տալ հանդես գալ՝ պատերազմական իրավիճակներում գենդերային հիմքով բռնություններին արձագանքելու և դրանք կանխելու նոր ռազմավարությունների գաղափարներով: Մասնակիցների միջև մտքերի փոխանակումների շնորհիվ կծնվեն նոր գաղափարներ, տեղի կունենան եղած գաղափարների ու պրակտիկաների փոփոխություններ:

Մոդուլ 4-ի շնորհիվ մասնակիցները կկարողանան ըմբռնել, թե որքան կարևոր է կանանց հկ-ների կողմից շահերի պաշտպանությունը հակամարտության ընթացքում և դրանից հետո որպես ոչ բռնի գործողության ձև: Մոդուլի բովանդակությունն ու պրակտիկ օրինակները մասնակիցներին ցույց կտան, թե ինչպես կարող է շահերի պաշտպանությունն ազդել որոշում ընդունողների և հանրային հաստատությունների քաղաքականությունների, պրակտիկաների և վարքագծերի վրա հակամարտության ընթացքում և դրանից հետո կանանց իրավունքների համատեքստում: Բացի դրանից՝ մոդուլի նպատակն է ոգևորել մասնակիցներին, որ մտածեն իրենց իսկ ջատագովության քայլերի մասին, որոնք հաճախ հասարակական կազմակերպությունների ամենօրյա գործունեության արդեն իսկ մասն են:

Նախագիծը

2022 թ. WAVE-ը՝ ԵԱՀԿ գենդերային հարցերի ծրագրի (WIN ծրագիր) հետ համագործակցությամբ, ձեռնարկեց մի նոր նախագիծ՝ ուղղված կանանց մասնագիտացված ծառայությունների կարողությունների զարգացմանը և խոստումնալից պրակտիկաների փոխանակմանը, որոնք վերաբերում են բռնությունը



վերապրածներին և պատերազմական ու հետպատերազմական պայմաններում գործող հկ-ներին արդյունավետորեն օժանդակելուն: Կանանց կազմակերպությունների փորձի հիման վրա մշակվեց գործիքակազմ, որը ցույց է տալիս հակամարտությունների հասցրած վնասն ու պատճառած մարտահրավերները և վավերագրում է առաջնահերթ այն խոստումնալից պրակտիկաները, որոնք հիմնված են ծրագրում ներգրավված WAVE-ի չորս անդամ կազմակերպությունների կոնկրետ օրինակների, ներառյալ՝ պատերազմական պայմաններում նրանց իրագործած նախաձեռնությունների և առաջարկների վրա: Գործիքակազմ պարունակող այս ուղեցույցը, որը կրում է «Պատերազմի ընթացքում և հետպատերազմական պայմաններում գենդերային կանխարգելում և արձագանքում. կանանց հկ-ների փորձառությունները և առաջարկները» վերնագիրը, հասանելի է հինգ լեզուներով՝ անգլերեն, բոսնիերեն, վրացերեն, հայերեն և ուկրաիներեն:

2023 թ. վերոհիշյալ գործիքակազմի հիման վրա մշակվեց սույն ձեռնարկն այն նպատակադրմամբ, որ այն հասանելի դառնա գենդերային բռնությունը վերապրածներին աջակցող ավելի ու ավելի շատ կանանց կազմակերպությունների և այլ դերակատարների: Այս դասընթացի շնորհիվ մասնակիցները կսովորեն նոր ռազմավարությունների մասին, կփոխանակեն իրենց փորձը և կբարելավեն այլ շահագրգիռ կողմերի հետ իրենց համագործակցությունը, օրինակ՝ շահերի պաշտպանության հարցերում:

Ծրագրում ներգրված WAVE անդամ կազմակերպություններն են՝ Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը (Երևան, Հայաստան), «Սուխումի» կանանց հիմնադրամը (Քութայիսի և Թբիլիսի, Վրաստան), Բանյա Լուկայի միավորված կանանց հիմնադրամը (Բանյա Լուկա, Բոսնիա և Հերցեգովինա) և «Կանանց տեսակետներ» կենտրոնը (Լվով, Ուկրաինա):

Դասընթացը վարելու ցուցումներ

Նախատեսված լսարան և ժամանակացույց

Ո՞ւմ համար է նախատեսված դասընթացը

Այս ձեռնարկը նախատեսված է կանանց հասարակական կազմակերպությունների համար, որոնք ներգրավված են բռնություն վերապրած կանանց և աղջիկներին մասնագիտացված աջակցություն տրամադրելու հարցում: Կարող են ներգրավվել նաև տարբեր ոլորտներից այլ կազմակերպություններ կամ խմբեր, որոնք աշխատում են կամ կցանկանային աշխատել հակամարտությունների պատճառով տեղահանված համայնքների հետ, այսինքն՝ կարող են նաև ներգրավվել համայնքային խմբեր, կամավորներ, սոցիալ-հոգեբանական ծառայություններ մատուցողներ, առողջապահական սպասարկում իրականացնողներ, ոստիկանության/անվտանգության աշխատակիցներ և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

Դասընթացն առավել արդյունավետ կլինի, եթե ունենա 8-ից առավելագույնը 15 մասնակից հեռավար՝ առցանց կազմակերպմամբ և առավելագույնը 12 մասնակից առկա դասավանդմամբ: Փոքր խմբերով դասընթացն անցկացնելը թույլ է տալիս բովանդակությունը յուրացնել առավել հանգամանորեն:

Ժամանակացույց

Ձեռնարկը մշակվել է 1-օրյա կամ 2-օրյա դասընթացի համար: Ժամանակացույցը կարող է փոփոխվել՝ ըստ վարողների հայեցողության և կարիքի:

Ձեռնարկը բաղկացած է չորս դասային մոդուլից, որոնցից յուրաքանչյուրի համար նախատեսված է 60-130 րոպե ժամանակ, ներառյալ՝ 15-20 րոպե ընդմիջում: Վարողը կարող է մոդուլների տևողությունը փոփոխել՝ բաց թողնելով որոշ վարժություններ կամ ավելացնելով իր մտահղացածները: Սահմանված ժամանակը պարզապես ուղղորդիչ նպատակ ունի, և վարողները կարող են յուրաքանչյուր գործողության համար՝ ըստ նպատակահարմարության, այսինքն՝ դասի նպատակի կամ թիրախային խմբի կամ դասընթացի հեռավար կամ առկա լինելու, ընդհանուր տևողությունից ավել կամ պակաս ժամանակ նախատեսել: Նման որոշման վրա մեծապես կարող են ազդել նաև ֆինանսական ու նյութական ռեսուրսները: Յուրաքանչյուր մոդուլի հետ ներկայացված է պարզ ուղղորդիչ ժամանակացույց:

Դասընթացավարի ուղեցույց

Դասընթացավարի դերը դասի ընթացքը դյուրացնելն է: Անգլերեն դասընթացավար՝ facilitator բառը գալիս է «facilitate»՝ դյուրացնել բայից, որն էլ ֆրանսերեն «facile»՝ դյուրին բառից է ծագում: Վարել՝ նշանակում է «դյուրինացնել ընթացքը», այսինքն՝ հնարավորություն ընձեռել, որ մասնակիցները հեշտորեն ընթանան քննարկումների, բացահայտումների, սովորելու միջով: Դասընթացի վարումը ներառում է հետևյալ գործողությունները՝ ծանոթացում թեմայի հետ, քննարկումների ու վարժանքների ուղղորդում, հարցերի առաջադրում, որպեսզի մասնակիցները մտածեն և խորապես ըմբռնեն: Դասընթացավարների դերն է օգնել դասընթացի մասնակիցներին հղանալ նոր գաղափարներ, հանդես գալ հարցերով և եզրահանգումներով, այլ ոչ թե՛ պատասխաններով:

A. Ինչ պետք է հաշվի առնել դասընթացը վարելիս

Դասընթացավար/ների որակավորումը/հմտությունները

- **Ոլորտային փորձառություն** – Դասընթացավարը պետք է զգայուն լինի գենդերային և պատերազմական հարցերում, ունենա գիտելիք և փորձ գենդերային բռնության կանխարգելման և արձագանքման, գենդերային հավասարության առաջխաղացման, պատերազմների ազդեցությունը կրող համայնքների հետ աշխատանքի ոլորտներում: Առանց դրանցում գիտելիքի ու փորձառության դժվար կլինի պատասխանել մասնակիցների՝ հաճախ զգայուն ու բարդ թեմաների վերաբերող հարցերին:
- **Լրացուցիչ դասընթացավարի ներգրավում** – Դասընթացավարների թիվը կախված է դասընթացի տևողությունից և ձևաչափից: Խորհուրդ է տրվում նկատի առնել լրացուցիչ դասընթացավարի, որը կօգնի խմբային աշխատանքները վարելու, քննարկումների ընթացքին հետևելու հարցերում: Առցանց դասընթացների ժամանակ լրացուցիչ դասընթացավարի դերը կարող է լինել գրավոր մեկնաբանություններին, հարցերին կամ այլ տեսակի դիտարկումներին պատասխանելը, վիրտուալ սենյակներում բաժանվելիս քննարկումները վարելը, խմբերի անդամներին ընտրելը և այլն: Խորհուրդ է տրվում, որ դասընթացավարները յուրաքանչյուր դասից հետո հանդիպեն և ամփոփեն անցկացված դասը և համապատասխանաբար փոփոխեն դասերի հետագա ընթացքը:
- **Համապատասխան գիտելիքներ և հմտություններ** – Դասընթացավարը պետք է հասկանա ֆեմինիստական մանկավարժական սկզբունքները և դրանց կիրառումը դասավանդման մեջ: Դասընթացավարը պետք է նաև ծանոթ լինի հոգեվնասվածքին իրագել մոտեցումներին և հասկանա, որ յուրաքանչյուր մասնակից կարող է ունենալ անցյալ և կենսափորձ, որոնք ներգործում են որոշակի թեմաների նկատմամբ նրանց վերաբերմունքի, դրանց արձագանքելու և անցկացնելու/մարսելու վրա: Մասնակիցները, հնարավոր է, կրել են կամ մինչ այդ պահը շարունակում են կրել հակամարտությամբ և բռնությամբ պայմանավորված հոգեվնասվածք: Ոմանց համար անհարմար կամ անապահով կլինի կիսվել անձնական տեղեկություններով կամ լսել բռնության և հակամարտությունների մասին քննարկումներ: Մասնակիցներին պետք է ի սկզբանե տեղեկացնել, որ նրանք իրավունք ունեն անհազանգել, որ խոսակցությունն իրենց համար տանելի չէ:
- **Մշակութային զգայունություն** – Դասընթացավարը պետք է հիշի, որ որոշ ավանդապահ միջավայրերում խառը խմբեր հավաքելը կամ որոշակի գենդերային հարցերից խոսելը կարող է խիստ զգայուն լինել: Կարևոր է նախապես մտածել դասընթացի միջոցառումները մշակութապես ընդունելի ու պատշաճ դարձնելու մասին, որ որևէ մեկը չվիրավորվի:
- **Ընդունելի ու հստակ բառապաշար** – Որոշ դեպքերում շատ կարևոր կարող է լինել, որ մասնակիցների հետ նախապես քննարկվի օգտագործվող տերմինների, բառերի և արտահայտությունների պարզ լինելը, ստուգվի, որ մասնակիցները հարմարավետ են իրենց զգում դրանց կապակցությամբ, հատկապես, եթե նրանք պատերազմով պայմանավորված զգայուն միջավայրերից խառը խմբում են: Չափազանց կարևոր է պառակտող տերմինաբանությունից խուսափելը: Դասից առաջ դասընթացավարները պետք է համաձայնության գան մասնակիցների հետ գենդերին, հակամարտությանը, բռնությանը և խաղաղությանը վերաբերող տերմինաբանության շուրջ, որպեսզի այդ տերմինները բավարար և ընդունելի լինեն բոլոր մասնակիցների համար:

- **Ընկալելի հապավումներ** – Դասընթացավարները պետք է խուսափեն հապավումներից, եթե նախապես լսարանին դրանք չեն բացատրել: Խորհուրդ է տրվում հաճախ գործածվող հապավումները փակցնել գրատախտակին կամ պատին, որպեսզի դրանք լինեն մասնակիցների տեսադաշտում, և նրանք արագ տեսնեն ու հասկանան դրանք:

- **Մոդուլների հարմարեցում որոշակի համատեքստերին** – Դասընթացավարները պետք է նկատի առնեն, որ այս ձեռնարկը շատ ընդհանրական բնույթի է, ուստի խիստ հանձնարարելի է համատեքստից կախված՝ մոդուլների հարմարեցումը: Օրինակ, կախված իրավիճակից, որում անց է կացվում դասընթացը՝ մոդուլների բովանդակությունը կարող է փոփոխություններ կրել, ասենք՝ ակտիվ պատերազմական իրավիճակ, ձգձգված հակամարտություն, երկարատև հետպատերազմական իրավիճակ և այլն: Կարևոր է նաև կիզակետը հարմարեցնել տվյալ երկրի իրավիճակին կամ ներառել հարցեր, որոնք կապված են կոնկրետ համատեքստի հետ:

- **Մոդուլների հարմարեցում մասնակիցների փորձառությանը** – Շատ կարևոր է, որ դասընթացավարները ճանաչեն մասնակիցների բազմազան փորձառությունները: Այս ձեռնարկը նախատեսված է որպես ընդհանուր ուղղորդում, և որպես այդպիսին՝ խրախուսելի է դրա հարմարեցումը դասընթացավարների կողմից մասնակիցների փորձառությունների մակարդակին: Որոշ մոդուլներ կարելի է ընդհանրապես բաց թողնել, եթե մասնակիցների գիտելիքների մակարդակը տվյալ ոլորտում բարձր է: Մասնակիցների փորձառությունը հաշվի առնելն ապահովում է արդյունավետ և թիրախային դասապրոցես: Երբ խումբը բաղկացած է լինում փորձառության տարբեր մակարդակներ ունեցող մասնակիցներից, խորհուրդ է տրվում անցնել մոդուլների այն մասերը, որոնք ծանոթ են մասնակիցներից առնվազն մի քանիսին: Նման ռազմավարական մոտեցումը խրախուսում է արժեքավոր փորձառությամբ փոխանակվելը, բարձրացնում է դասապրոցեսի արդյունավետությունը, նպաստում է մասնակիցների միջև փոխվստահության ամրապնդմանը: Խմբի ներսում առկա կոլեկտիվ գիտելիքը նկատելով ու օգտագործելով՝ դասընթացավարները կարող են բոլոր մասնակիցների համար ստեղծել ուսումնական դինամիկ ու հարուստ փորձառություն:

- **Անկողմնակալություն և տարածք չզբաղեցնելը** – Երբ դասընթացավարները որոշակի թեմայի վերաբերում են հուզումնախառը վերաբերմունքով և համոզմունքներով, դա կարող է դժվարություն ստեղծել քննարկումներում չզերիշխելու տեսանկյունից: Կարևոր է, որ վարժանքների ժամանակ խրախուսվի մասնակցությունը, իսկ գիտելիքի ու իմացության ստեղծումն արվի հենց մասնակիցների կողմից: Դասընթացավարները պետք է հնարավորինս անկողմնակալ մնան: Որևէ գաղափարով կամ փորձառությամբ ներդրում ունենալու համար դասընթացավարը պետք է մասնակիցներին ասի, որ փոխում է իր դերը և հանդես գալիս որպես անհատ, ով իր տեսակետն է արտահայտում, որից հետո նա նորից պետք է վերադառնա դասընթացավարի իր դերին: Պետք է յուրաքանչյուր դասից հետո անդրադառնալ դրա ընթացքին և մտորել դրա շուրջ:

B. Ինչ պետք է հաշվի առնել դասընթացը վարելիս

Ճանաչել լսարանին – Որպեսզի դասընթացը համապատասխանի մասնակիցների կարիքներին և հետաքրքրություններին, կարևոր է իմանալ, թե ովքեր են մասնակիցները, ինչ բնույթի աշխատանք են անում, ինչ գիտելիքներ ունեն գենդերային բռնության մասին: Դասընթացավարները կարող են նախապես իմանալ մասնակիցների ունեցած փորձառությունների, դասընթացից ակնկալիքների, իրենց աշխատանքի ընթացքում հանդիպած գենդերային բռնության խնդիրների մասին: Այդ նպատակով դասընթացից առաջ նրանք կարող են հարցաշարեր կամ այլ գործիքներ օգտագործելով մի շարք հարցեր հղել մասնակիցներին առցանց միջոցներով (օրինակ՝ Google ձևաթղթեր, SurveyMonkey կայքը և այլն): Որպես նմուշ առաջարկենք մի քանի ուղղորդող հարց.

A) Ի՞նչն է ձեզ հետաքրքրում այս դասընթացի/թեմայի հետ կապված:

B) Ունե՞ք արդյոք պատերազմական կամ հետպատերազմական պայմաններում գենդերային բռնություն ապրած կանանց և աղջիկների հետ աշխատելու փորձ՝ աշխատանքային կամ կամավորական:

C) Արդյո՞ք Դուք անձնապես կրում եք պատերազմի հետևանքները: Եթե այո և եթե անհարմար չէ Ձեզ համար, խնդրում ենք հակիրճ նկարագրել այդ փորձառությունը: Եթե հարցին պատասխանելը Ձեզ համար դժվար է, կարող եք բաց թողնել այն:

Դասընթացավարները պետք է միշտ հաշվի առնեն, որ մասնակիցների՝ բռնության ու հակամարտության փորձառությունները, կարող են արտահայտվել հուզական խնդիրների կամ հոգեվնասվածքի տեսքով, որի պարագայում պետք է վարվել լրացուցիչ հոգածությամբ, կամ արդյո՞ք լսարանում կան մշակութային կամ կրոնական արգելված թեմաներ, որոնք կարող են արգելակել սովորելն ու տեղեկատվության փոխանակումը:

Դասընթացի վայրը և ժամանակը – Ճիշտ վայրի ընտրությամբ կարող է պայմանավորված լինել նաև մասնակիցների կողմից նյութը լավ յուրացնելու հաջողությունը: Ավելի հարմար տարբերակ է դասընթացն առկա անցկացնելը, որի ժամանակ աշխատանքային հարցերով շեղվելու հնարավորություն չկա: Ինչ վերաբերում է տեղին, այն **պետք է հասանելի լինի մասնակիցներին**: Ինչ վերաբերում է ժամանակին, ուշադրություն դարձրեք **մասնակիցների** գենդերային դերերին ու պարտականություններին, որոնք ազդեցություն կարող են ունենալ դասընթացին ներկայանալու և ակտիվորեն մասնակցելու վրա: **Դասասենյակի դասավորության** հետ կապված՝ այն պետք է բավարար ընդարձակ լինի, որպեսզի հնարավոր լինի խմբով աշխատել՝ նախընտրաբար նստատեղերի այնպիսի դասավորությամբ, որը նպաստավոր է անմիջական շփման համար: Այս իմաստով խորհուրդ է տրվում կիսաշրջանի դասավորությունը սեղանների շուրջ, երբ բոլոր մասնակիցները կարող են տեսնել մյուսների դեմքերը: Սենյակը պետք է նաև մասնակիցներին հնարավորություն տա խմբերի բաժանվելու և փոքր խմբերով աշխատելու: Որոշ վարժանքների համար սեղաններ պետք կգան: Կարևոր նկատառումներ են, իհարկե, սենյակի ակուստիկ միջավայրն ու լուսավորությունը: Ինչ վերաբերում է **հարմարություններին**, պետք է իմանալ, որ մասնակիցներն ավելի լավ կսովորեն այնպիսի միջավայրում, որտեղ առկա են հարմարություններ՝ սեղաններ, աթոռներ, ազատ տարածությամբ պատեր, որոնցից կարելի է կախել գրի առնված նոթերը, դասընթաց մատուցելու համար կարևոր սարքավորումներ, ներառյալ՝ ինտերնետի հասանելիություն, համակարգիչ, պրոյեկտոր և այլն:

Նախապատրաստել անհրաժեշտ նյութեր – Դասընթացավարները պետք է յուրաքանչյուր դասի ժամանակ տրամադրեն հետևյալ նյութերը:

- Նոթատետրեր ու գրիչներ բոլոր մասնակիցների համար
- Գրատախտակին փակցվող թուղթ (flipchart) և պատվանդանով ջնջովի գրատախտակ (whiteboards)
- Գունավոր մարկերներ
- Շարժական համակարգիչ և պրոյեկտոր: Անհուսալի էլեկտրասնուցման դեպքում նկատի ունենալ պրեզենտացիաների այլընտրանքային տարբերակներ (օրինակ՝ սլայդերի նյութը արտագրել գրատախտակի թղթի վրա)
- Գունավոր կաշուն թղթեր կամ քարտեր
- Սոսնձվող ժապավեն, կոճգամներ և նմանատիպ պարագաներ թղթերը պատին կամ գրատախտակին փակցնելու համար
- Անվանաքարտեր (նախընտրելի է)
- Վարժանքների թերթիկները և մասնակիցներին տրամադրվելիք նյութերը
- Դասընթացի օրակարգը՝ բաշխված մասնակիցներին կամ գրված գրատախտակին:

Ստեղծել սովորելու համար նպաստավոր միջավայր – Մեծահասակների մասնակցային կրթության սկզբունքների համաձայն՝ խորհուրդ է տրվում հավասարակշռել տեսությունն ու գործնականը և նյութը մատուցել տարբեր մեթոդների համադրությամբ՝ սովորական դասախոսությունից և PowerPoint պրեզենտացիաներից մինչև ավելի ինտերակտիվ և մասնակցային մեթոդներ, ինչպիսիք են՝ խմբային աշխատանքները, մտազրոհային վարժանքները, դերախաղերը, անհատական մտորումները և այլն: Սովորելու տարբեր մեթոդների համադրումը թույլ է տալիս բավարարել մասնակիցների սովորելու տարբեր կարիքներն ու ոճերը: Դասընթացավարները կարող են նաև կարևոր դերակատարում ունենալ իրենց օրինակելի վարքագծով, որը ստեղծում է բաց ու ավելի մասնակցային ուսումնական միջավայր: Օրինակ՝ նրանք կարող են անձնական պատմություններ պատմել, խոսել անցյալից քաղված դասերի մասին, որը շատ արդյունավետ կարող է լինել այդ նպատակին հասնելու համար:

Ստեղծել ապահով միջավայր – Ապահով և հարմարավետ միջավայր ստեղծելը կարևոր է դասապրոցեսի համար: Վարողները պետք է մասնակիցների հետ այնպես աշխատեն, որ ստեղծեն գաղտնապահության, տեղեկատվությամբ փոխանակվելու ազատության, սպառնալիքներ չպարունակող և մասնակիցների միջև բարերար շփումներին նպաստող միջավայր: Կարևոր է նախքան սկսելը համաձայնվել հաղորդակցության շուրջ և թե ինչպես է տեղեկատվությունը փոխանակվում դասընթացի ժամանակ և դրանից հետո: Հատկապես կարևոր են սոցիալական ցանցերի, լուսանկարելու, անձնական տեղեկատվության հետ կապված հարցերը: Կարևոր է մասնակիցների հետ նախապես համաձայնության գալ, որ նշումներ են կատարվելու, որ հավաքագրված տվյալներն օգտագործվելու են այսինչ կամ այնինչ համաձայնեցված նպատակով, որ ոչ մի մեկնաբանության տակ չի նշվելու մեկնաբանողի անունը (Չեթեմ հաուսի կանոն):

Բացատրել ընդհանուր կանոնները – Դասընթացի մասնակիցների հետ համատեղ ընդհանուր կանոններ մշակելը շատ կարևոր է: Դրանք ստեղծում են հարմար պայմաններ, որոնց ներքո մասնակիցները կարող են աշխատել և սովորել ապահով: Նման գործընթացը նաև ամրապնդում է վարողի և մասնակիցների, ինչպես նաև հենց մասնակիցների միջև հարաբերությունը: Տեղին են հետևյալ ընդհանուր կանոնները՝ անջատել բջջային հեռախոսները, հարգել գաղտնապահությունը, խուսափել բռնություն վերապրածների մասին նույնականացնող տվյալներ նշելուց, չձայնագրել կամ չլուսանկարել առանց թույլտվության և այլն:

Բավարար ժամանակ տրամադրել մտորումների համար (ռեֆլեքսիա) – Դասը պլանավորելիս վարողը պետք է մտապահի, որ տրամադրվող տեղեկատվության որոշ մասը նոր կլինի լսարանի համար, ուստի այն պետք է պարզ ներկայացվի: Ժամանակ է պահանջվում, որ մասնակիցների արմատացած համոզմունքներն ու վերաբերմունքը հաղթահարվեն, դրա համար էլ կարևոր է մասնակիցներին ժամանակ տրամադրել, որ նրանք թեմայի շուրջ մտորեն առանձին ու հետո իրար մեջ քննարկեն:

Հարգել տարբերվող տեսակետները – Դասընթացավարները պետք է ապահովեն, որ բոլոր մասնակիցները զգան, որ իրենց լսում են և հարգում (մյուսների՝ կարծիք ունենալու իրավունքը հարգելը նույնպես պետք է գրվի դասընթացի ընդհանուր կանոնների ցանկում):

Ապահովել հետադարձ կարծիքի արտահայտման հնարավորությունը – Կարևոր է, որ մասնակիցները հնարավորություն ունենան արտահայտելու, թե դասընթացին հետևելու իմաստով ինչ կետի են հասել և ինչն է դեռևս իրենց համար դժվարին մնում: Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր օր 10-15 րոպե տրամադրել ամփոփմանը: Ամփոփիչ սլայդը ցուցադրելով՝ խնդրեք մասնակիցներին մտածել մի բանի մասին, որ իրենց հիշողությունում տպավորվել է դասից և մի բան, որ դասընթացից հետո նրանք կկիրառեն:

Ֆեմինիստական սկզբունքներ

Ֆեմինիստական մոտեցումը կրթությանը

Ֆեմինիստական մանկավարժության հիմքում հենց ֆեմինիստական մոտեցումներն ու սկզբունքներն են, որոնք մարտահրավեր են նետում կրթության արական պատումներին և ապակառուցում են «ուսուցիչ-աշակերտ» հիերարխիկ իշխանության հարաբերությունները: Ֆեմինիստական մանկավարժության նպատակը հայրիշխանական համակարգերի և ճնշման փոխակերպումն է՝ սովորողի մոտ առաջացնելով կայծ և հետաքրքրություն գործելու և ակտիվ գործողությամբ փոփոխություններ բերելու հանդեպ: Ֆեմինիստական մանկավարժությունը տարբերվում է դասավանդման ավանդական եղանակից, քանի որ այն կոչ է անում գործողության, իսկ դաս տալու և դաս առնելու գործընթացներն անցնում են դասասենյակի պատերից անդին: Բացի դրանից՝ ողջունվում են սովորողի քննադատական մտածողության կիրառումը և հայրիշխանական առկա կառուցվածքների փոխակերպումը: Չնայած ֆեմինիստ լինելու և ֆեմինիստական հետազոտական գործունեություն ծավալելու ձևերը բազմազան են, կան համընդհանուր սկզբունքներ, որոնք անցյալ տասնամյակների ընթացքում շարունակաբար քննարկվել են շատ ֆեմինիստ մտածողների կողմից:

Դասավանդման ժամանակ կիրառվելիք ֆեմինիստական սկզբունքները

Ֆեմինիստական սկզբունքները կարող են կիրառվել ոչ միայն ֆորմալ կրթական հաստատություններում, այլև ոչ ֆորմալ կրթական միջավայրերում, երբ անց են կացվում դասընթացներ:

- **Անդրադարձ իշխանության դինամիկային** – Ընդունել, որ կա իշխանության դինամիկա, ուշադրություն դարձնել փոխհաստի ունեցած անհավասարություններին, փորձել հաղթահարել դրանք, օգտագործել բաց երկխոսությունը որպես հաղորդակցության հիմնական եղանակ. այս ամենն այնպիսի միջավայր է ստեղծում, որը խրախուսում է մասնակիցներին հարցադրել ու փոխակերպել ճնշող իշխանության հարաբերությունները: Նման միջավայրերում վարողը նույնպես սովորողի դերն ունի և արժևորում է մնացածի ներդրումը:
- **Քննադատական մտածողության խրախուսում** – Քննադատական հարցադրումներ անել, բարդ հարցերին «հեշտ պատասխաններով» արձագանքելուց խուսափել, կառուցվածք ունեցող բանավեճ սկսել, որով քննադատորեն վերլուծվում են հասարակական նորմերը, գենդերային դերերը և մշակութային ակնկալիքները. այս ամենը տարածք է բացում, որ մասնակիցները հարցադրեն գենդերի մասին արդեն գոյություն ունեցող դիսկուրսները: Բացի դրանից՝ տարածք է բացվում ինքնավերլուծության և սեփական կողմնակալություններն ըմբռնելու համար:
- **Ներառական և բազմազան դասընթացների մշակում** – Մշակել այնպիսի դասընթացներ, որոնք բանախոսների, դասընթացավարների, ուսումնասիրվող դեպքերի առումով ներառական են և բազմազան, ինչի արդյունքում ապահովվում է բովանդակության համալրումը տարբեր փորձառություններով և տեսակետներով:
- **Անդրադարձ գենդերային կարծրատիպերին** – Հակադրվել և կոտրել վնասարար գենդերային կարծրատիպերը, որոնք կարող են ազդել մասնակիցների ընկալումների և վարքի վրա:
- **Դասավանդման ճկուն ձևաչափեր** – Նախատեսել դասավանդման այնպիսի ձևաչափեր, որոնք համապատասխանում են սովորելու տարբեր ոճերին և կարիքներին (ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները), հեռավոր տարածքներից մասնակիցների համար՝ առցանց մասնակցության տարբերակներ, փոքր խմբերի կազմում խորը քննարկումներ

համար, պրակտիկ գործողություններ: Այս սկզբունքը երաշխավորում է, որ տարբեր մասնակիցների բազմազան կարիքները հաշվի առնվեն դասը նախապատրաստելիս և այն վարելիս:

- **Առաջնորդության և ներկայացվածության խրախուսում** – Խրախուսել կանանց և լուսանցքայնացված գենդերային խմբերից անձանց դասապրոցեսում առաջնորդող դերեր ստանձնել և աջակցել նրանց, որ ներկայացված լինեն տարբեր ոլորտներում: Սրա արդյունքում մասնակիցները կկարողանան ակտիվանալ, կկայացնեն սոցիալական փոխակերպում ու արդարություն առաջ մղելու որոշում:
- **Գենդերային վերլուծության ինտեգրում** – Ներմուծել գենդերային վերլուծությունը դասընթացի բովանդակության և քննարկումների մեջ՝ ընդգծելով, թե ինչպես են գենդերային նորմերն ու ուժային դինամիկան ազդում կյանքի տարբեր կողմերի վրա:

Հոգեվնասվածքին իրազեկ դասապրոցես

Ի՞նչ է հոգեվնասվածքը

Հոգեվնասվածքը հունարեն տրավմա (τραύμα) բառն է, որը նշանակում է վերք:² Ավելի վաղ այն բժշկության մեջ օգտագործվում էր ֆիզիկական բնույթի վնասվածքներն անվանելու համար, սակայն ավելի ուշ այն մտավ նաև հոգեբուժական գրականություն, մասնավորապես Ֆրոյդի կողմից՝ նշանակելու հոգեբանական բնույթի վնասվածք, որն ազդում է մարդու մտքի վրա:³

Մեր օրերում այն լայնորեն գործածվում է ցանկացած ապակայունացնող իրադարձության կամ փորձառության համար, որը չմարսվելու դեպքում ազդում է անձի ֆունկցիոնալության և այդ փորձառությունը հաղթահարելու կարողության վրա, ինչն էլ հուզական, ֆիզիկական և հոգեբանական վնաս է պատճառում նրան:

«Տրավման շատ ավելին է, քան վաղ անցյալում տեղի ունեցած ինչ-որ մի բանի մասին պատմությունը»

— Բեսել Վան Դեր Քոլք⁴

Հոգեվնասվածքը պարզապես մի իրադարձություն կամ պատմություն չէ, որ անցյալում տեղի է ունեցել, այն նաև վառ հիշողություն է, մարդու մտքի ու մարմնի վրա դաջված մի բան, որը կարող է ներկա պահին ակտիվանալ ինչ-որ թրիգերի միջոցով՝ հաճախ արտահայտվելով անցյալի տեսարանների վերականգնմամբ, որին զուգահեռ ի հայտ են գալիս հոտեր, պատկերներ, ձայներ և նույնիսկ ֆիզիկական զգացողություններ: Նման վերհուշները կարող են ներկա պահի հետ ոչ մի կապ չունենալ և հաճախ հիմնված են լինում անցյալից սնուցվող վախի և տագնապի վրա: Բայցևայնպես, անցյալի իրադարձության հիշողություններն այնքան վառ են, որ ներկա պահին հրահրում են խիստ ապակարգավորող հուզական և/կամ ֆիզիկական ռեակցիաներ:⁵

2 Kolaitis G., Olf M. (2017), Psychotraumatology in Greece, European Journal of Psychotraumatology, 8: sup4. վերջին մուտքը՝ հուլիսի 31, 2023 թ. <https://doi.org/10.1080/20008198.2017.1351757>.

3 Caruth, C. (1996). Unclaimed experience: Trauma, narrative, and history. Johns Hopkins University Press.

4 Van der Kolk, B. A. (2014). The body keeps the score: Brain, mind, and body in the healing of trauma, p. 221. Viking.

5 Ibid.

A. Տեմինիստական մոտեցումը հոգեվնասվածքին

Այնպիսի միջավայրերում, որոնցում ռեսուրսները նվազ են, հասարակական կապերը քայքայված են կամ բոլորովին ոչնչացած օրինակ՝ պատերազմի կամ հակամարտության պատճառով, տրավմատիկ իրադարձություններից հետո արագ վերականգնվելու հնարավորությունները շատ ավելի քիչ են լինում:⁶

Կարևոր է հիշել, որ հոգեվնասվածքը միայն անձնական փորձառություն չէ, այլև սոցիալ-քաղաքական հասկացություն, որն ունի համակարգային պատճառներ և հետևանքներ: Հոգեվնասվածքի համակարգային հետևանքներից մեկը հակամարտությունների ժամանակ գենդերային բռնությունն է, որը հնարավոր չէ վերահսկել անհատական մակարդակում: Հոգեվնասվածքի համակարգային հետևանքների օրինակներից է պատերազմից կամ հակամարտությունից հետո դրա թողած միջսերդնային ազդեցությունը, որին շատ դժվար է արձագանքել առանց համակարգային փոփոխությունների և միջամտությունների:

B. Հոգեվնասվածքազգայուն մոտեցում

Դասընթացի յուրաքանչյուր մասնակից դասասենյակ է մտնում ինչ-որ պատմությամբ: Հաճախ այն կարող է ներառել հոգեվնասվածք պատճառած իրադարձություններ, հատկապես, եթե դասընթացը կազմակերպված է այն մարդկանց համար, ովքեր աշխատում և ապրում են ձգձգվող, ակտիվ կամ դադարած հակամարտության կամ պատերազմական իրավիճակում:

Հոգեվնասվածքին իրազեկ դասապրոցեսի կազմակերպման հիմնական քայլերը հետևյալն են.

- **Առաջնահերթ դարձնել ապահովությունը** – Երբ մարդիկ հոգեվնասվածք են ստանում, մի բան սովորելն ավելի երկրորդային է դառնում, քան ապահով զգալը: Քանի որ հոգեվնասվածքն ավիրում է հոգատարության և պաշտպանության սոցիալական համակարգերը, կարևոր է դառնում դասասենյակն ապահով տարածք դարձնելը, որտեղ վերականգնվում է ինքնավստահությունը և վստահությունն այլոց նկատմամբ: Դասընթացը վարողները մասնակիցներին նախապես զգուշացնում են առկա ռեսուրսների մասին, եթե դրանց կարիքը զգացվի թրիգերային վիճակում հայտնվելու պարագայում: Մյուս կողմից՝ դասընթացավարները պետք է իրատես լինեն, թե ինչ աջակցություն կա և որպես վարողներ իրենք իրենց կարողության սահմանները ինչպես պետք է պաշտպանեն: Կարևոր է մասնակիցներին տեղեկացնել, որ դուք ի վիճակի չեք հանդես գալ որպես հոգեթերապևտ և որ ձեր գործառույթները դասընթացի ժամանակ սահմանափակ են:
- **Քաջալերել ընտրություն կատարելն ու ինքնուրույնությունը** – Հոգեվնասվածքի հետևանքներից է անուժության ու հուսալքվածության զգացումը՝ հատկապես, երբ հոգեվնասվածքը ստացվում է ոչ թե մեկ իրադարձությունից, այլ կրկնաբար: Երբ դուք թույլ եք տալիս մասնակիցներին, որ որոշակի վերահսկողություն դրսևորեն դասապրոցեսի նկատմամբ, դա նրանց ինքնավարության զգացում է տալիս: Դա անելու շատ եղանակներ կան, օրինակ, պատահաբար ընտրված մասնակիցներին, հատկապես, իրենց հոգեվնասվածքից բխող գործողություններ անողներին, խնդրել դառնալ դասապրոցեսում կամավորություն անող, մեկ այլ եղանակ է թույլ տալ, որ մասնակիցները ընտրեն, թե որ վարժանքն են ուզում անել կամ որ իրենք առաջարկեն ինչ-որ վարժանք կամ, վերջիվերջո, չանել բան, որն իրենք չեն ցանկանում անել:
- **Ընկալել հոգեվնասվածի լայն տարածվածությունն ու ազդեցությունը** – Ինչպես արդեն նշվեց, հոգեվնասվածքը միայն անհատական փորձառություն չէ, այն նաև համակարգային է: Նախքան դասը սկսելը վարողները պետք է իրազեկ լինեն այն հասարակության կամ երկրի

6 Medica Mondiale. Glossary: Psychological trauma; STA - Stress- and Trauma-sensitive Approach. www.medicamondiale.org. <https://medicamondiale.org/en/> վերջին մուտքը՝ հուլիսի 31, 2023 թ.:

անդրսերնդային տրավմայի պատմության համատեքստին, որտեղ անց է կացվում դասընթացը: Ի հավելումն, ըմռնելը, թե ինչ տարբեր ձևերով կարող է արտահայտվել հոգեվնասվածքը, կօզնի ձեզ, որպես վարողների, նշմարել, ընդունել և հարգել մասնակիցների անցյալի փորձառությունները:

- **Համագործակցել դասընթացի մասնակիցների հետ** – Երբ մարդիկ հոգեվնասվածք են ապրում, սովորելը դառնում է հարաբերվելու համեմատությամբ երկրորդային: Դասապրոցեսի ընթացքում դուք պետք է ճանաչեք յուրաքանչյուրի արժեքավոր ներդրումը, բարձրաձայնեք և գնահատեք նրանցից յուրաքանչյուրի ներդրումը:
- **Կիրառել գենդերազգայուն փոխհատվող մոտեցումներ** – Որպես դասընթացավար տեղյակ եղեք, որ հոգեվնասվածքն ունի մշակութային, գենդերային և սոցիալական կողմեր: Եթե նույն իրավիճակը պատահի տարբեր մարդկանց հետ, նրանց ապրումները կլինեն տարբեր՝ ելնելով ոչ միայն անհատական առանձնահատկություններից, այլև սեռից, գենդերից, տարիքից, կարգավիճակից և մշակութային պատկանելությունից:
- **Քաջալերել հմտությունների ձեռքբերումը** – Դասապրոցեսի ընթացքում մասնակիցներին ծանոթացրեք այնպիսի միջոցների հետ, որոնք օգնում են հաղթահարել սթրեսն ու ապակարգավորումը: Դա կօզնի մասնակիցներին զգալ իրենց ավելի կայունացած և պատրաստ ինչպես դասընթացին, այնպես էլ իրենց առօրյայում:

Առկա և հեռակա դասավանդում

Այս դասընթացը հիմնականում նախատեսված է որպես առկա դասընթաց: Սակայն պետք չէ դրանով կաշկանդվել, այն կարելի է օգտագործել նաև առցանց դասընթացի տեսքով: Ձեռնարկում ներառված է նաև տեղեկատվություն հեռակա դասավանդման մեթոդների մասին:

Առկա

Առկա դասավանդման համար շատ կարևոր է հաշվի առնել, որ դասընթացը նախատեսված է 8-ից առավելագույնը 12 մասնակցի համար: Սա այն նպատակահարմար թիվն է, որի դեպքում դասընթացը վարողի ուշադրությունը հավասարապես է բաշխվում բոլոր մասնակիցներին, յուրաքանչյուրը զգում է, որ լսված է, նկատված ու հասկացված: Բացի դրանից՝ փոքր խմբերում մասնակիցներն ավելի շատ ժամանակ ունեն վերլուծելու և իմաստալից քննարկումներ անելու համար: Երբ դասընթացավարները ոչ թե երկուսն են, այլ մեկը (ինչը հավանական է քիչ միջոցների առկայության դեպքում), 12-ից ավելի մասնակցով դասընթաց անցկացնելու համար շատ ավելի մեծ ջանքեր կպահանջվեն, ու դա ավելի դժվար կլինի անել, որի հետևանքով դասընթացի որակը կարող է ընկնել: Առկա դասավանդման հավելյալ մեթոդների համար օգտվեք այս բաժնի սկզբում ներկայացված տեղեկատվությունից:

Հեռակա

Հեռակա դասավանդման համար կարևոր է հաշվի առնել, որ դասընթացը նախատեսված է առավելագույնը 15 մասնակցի համար:

Առցանց դասընթացներ վարելու համար հայտնի հարթակներից է Zoom-ը, բայց կարելի է օգտվել նաև ուրիշներից, օրինակ՝ Google Meets-ից: Ինչ հարթակ էլ ընտրվի, կարևոր է մինչև մասնակիցների հետ համատեղ դրանից օգտվելը նախ ծանոթանալ դրան: Խորհուրդ է տրվում 2-3 փորձարկում անել, որպեսզի ձեռք բերեք հարթակներն օգտագործելու հմտություններ, ինչպիսիք են՝ առցանց վիրտուալ սենյակներ ստեղծելն ու դրանցում մասնակիցներին բաշխելը, էկրանով կիսվելը, միաժամանակ զրուցարանից

օգտվելը և թարգմանության ֆունկցիան կիրառելը (եթե թարգմանիչներ եք ունենալու): Քանի որ հեռակա մասնակիցների նախընտրելի թիվը 15-ն է, Zoom-ի անվճար հնարավորություններից կարելի է օգտվել:

Շատ կարևոր է նաև հաշվի առնել այն ռիսկերը և անվտանգության խնդիրները, որոնք կարող են ծագել առցանց համակարգում դասընթաց վարելու հետ կապված: Վարողը պետք է նախապես մասնակիցներին հարցնի՝ արդյո՞ք նրանք ապահով են իրենց զգում տվյալ հարթակում, հատկապես երբ հարցը վերաբերում է պատերազմական իրավիճակներում գենդերային բռնությանը վերաբերող զգայուն հարցեր քննարկելուն: Ապահովության խնդիրներն ու ռիսկերը կան ինչպես առկա, այնպես էլ հեռակա դասավանդման դեպքում, սակայն հեռակա դասավանդման ժամանակ նման ռիսկերը կարող են ավելի ընդգծվել, օրինակ՝ անձանց ինքնությունը կամ ինչ-ինչ գաղափարներ բացահայտելու դեպքում, որի պատճառով բացահայտվածը կարող է թիրախավորվել ինչ-որ խմբերի կամ անհատների կողմից, եթե վերջիններս առցանց դասընթացին հասանելիություն ձեռք բերեն: Դասընթացավարը պետք է տեղյակ լինի նման ռիսկերին: Եթե որևէ մասնակից շարունակում է անապահով զգալ առցանց հարթակներում մասնակցելիս, նա պետք է իր մտահոգություններն արտահայտելու և նույնիսկ դասի որևէ մասից դուրս գալու հնարավորությունն ունենա, եթե իր մտահոգությունները լուրջ սպառնալիք են իր անվտանգությանը:



Ծանոթացում դասընթացի հետ

Մասնակիցների ու դասընթացավարների ծանոթացում մերձեցման խաղերի միջոցով, ընդհանուր կանոնների սահմանում, ակնկալիքների հայտնում

Ձեռնարկի այս մասը ներկայացնում է հուշումներ յուրաքանչյուր դաս սկսելու և մասնակիցների միջև սառույցը կտրելու մասին:

- Դասը բարեհաջող սկսելու համար այն պետք է մասնակիցների համար անմոռանալի դարձնել: Դրա համար դասընթացավարներին առաջարկում ենք բոլոր մասնակիցներին ձայն տալ, որպեսզի նրանք ճանաչեն իրար, սակայն դա անեն հետաքրքրաշարժ ու զվարճալի ձևով: Այնուհետև այդ նույն մասնակիցները կառաջարկեն ընդհանուր կանոններ կամ համաձայնության կգան դասընթացի ժամանակ վարքի ու վարվեցողության շուրջ, որին կհաջորդի դասընթացի բովանդակությունից ու ընթացքից ունեցած ակնկալիքների մասին քննարկումը:
- Կարևոր է հիշել, որ դասընթացում կլինեն սովորելու տարբեր ոճեր ունեցող մասնակիցներ, և օրինակ՝ մերձեցման խաղերից որոշները հաճելի կամ դյուրին կլինեն մի խմբի համար, բայց այդպիսին չեն լինի մեկ ուրիշի համար: Կարևոր է, ուրեմն, ուշադիր լինել, թե ձեր մասնակիցները սովորելու ինչ ոճ ունեն և համապատասխանաբար ընտրություն կատարել խաղերից ու վարժանքներից:
- Դասավանդման ֆեմինիստական սկզբունքներին հետևելը նշանակում է, որ հենց սկզբից շատ կարևոր կլինի քանդել աստիճանակարգային իշխանության հարաբերությունները: Դասընթացավարի կարևոր դերն է ապահովել այնպիսի մթնոլորտ, որում մասնակիցներն իրենց բոլորին հավասար են զգում:

Ողջունի ու սառույցը կտրելու խաղերի օրինակներ (10 րոպե)

Դասընթացավարների գործառույթն է ողջունել մասնակիցներին, հրավիրել ծանոթանալու միմյանց հետ (միայն անունները կարող են բավարար լինել, պաշտոնները՝ աշխատավայրերը կամ կազմակերպությունները նշելը կարող է պարտադիր չլինել) և հիշեցնել դասընթացի ընդհանուր նպատակն ու թեման:

Սառույցը կտրելու խաղերի օրինակներ

1. «Երկու ճշմարտություն և մեկ սուտ»

Խնդրեք մասնակիցներին մտածել իրենց մասին երկու ճշմարիտ և մեկ ոչ ճշմարիտ միտք և կիսվել մասնակիցների հետ, որոնք պետք է գուշակեն, թե որ միտքն է սուտ: Դասընթացավարը կարող է սկսել ինքն իրենից: Ահա՛ մի օրինակ:

Դասընթացավար. «Ուրեմն՝ ա) ես ճամփորդել եմ 18 երկիր, բ) ես ունեմ երկու կատու, գ) ես տեսել եմ հյուսիսափայլը»:

Մասնակիցները փորձում են գուշակել, թե ասվածից որը ճիշտ չէ: Վարողը բացահայտում է, որ գ) ինքը հյուսիսափայլ չի տեսել, երանի տեսած լիներ:

Այսպիսով, մասնակիցները հերթով ներկայացնում են իրենց մասին երկու ճշմարիտ տեղեկություն և մեկ սուտ ու փորձում գուշակել սուտը:

2. «Մարդկային բինգո»

Հրավիրեք մասնակիցներին «մարդկային բինգո» անունով խաղը խաղալու: Բաժանեք բինգոյի քարտերը, որոնց վրա գրված կլինեն տարբեր նախադասություններ: Նախապես պատրաստած ունեցեք ձեր մասնակիցների թվին համապատասխան քարտեր ու նախադասություններ: Հանձնարարեք գտնել սենյակում այնպիսի մարդու, ով կհամապատասխանի գրված նախադասություններից բոլորին: Երբ նրանք գտնեն այդպիսի մարդու, պետք է խնդրեն ստորագրել իր անվան ուղղությամբ վանդակում: Խաղի նպատակն է որքան հնարավոր է շուտ լրացնել բինգո քարտը:

«Մարդկային բինգո» քարտի նախադասությունների օրինակներ

Նախադասություններ	Անձ1	Անձ2	Անձ3	Անձ4	Անձ5	Անձ6
1. Ճամփորդել է երեքից ավելի երկիր:						
2. Խոսում է մեկից ավելի լեզվով:						
3. Ընտանի կենդանի է պահում:						
4. Սիրում է քայլարշավներ, բացօթյա զբաղմունքներ, օրինակ՝ հեծանվարշավ, ջրասահք (սերֆինգ), վրանային արշավներ և այլն:						
5. Վերջին ամսում գիրք է կարդացել:						
6. Սննդի հարցում ունի նախընտրելի խոհանոց:						
7. Կարող է լողալ:						
8. Կարող է երեք առարկայով ձեռնածություն անել:						
9. Սիրում է ճաշ պատրաստել կամ թխել:						
10. Լեռան գագաթ է բարձրացել						
Բոլոր նախադասություններին համապատասխանող անձի անունը կամ ստորագրությունը						

Այս քարտը լրացնելու համար մասնակիցները պետք է քայլեն և իրար հարցեր տան, ինչն էլ խաղի նպատակն է՝ միմյանց ավելի լավ ճանաչելը: Խաղի ավարտին բոլորին շնորհակալություն հայտնեք:

3. «Ի՞նչ կա անվան մեջ»

Նախքան դասընթացը սկսելը մասնակիցներին հրավիրեք հերթով ներկայանալ իրենց անունով և ասել փոքրիկ պատմություն կամ փաստ, թե ինչպես է ընտրվել իրենց անունը և ինչ նշանակություն ունի: Խաղը սկսեք ձեր օրինակով:

4. «Կիսվեք նշանակալից առարկայով»

Հրավիրեք մասնակիցներին ծանոթացումը սկսել իրենց համար նշանակություն ունեցող և իրենց մոտ այդ պահին առկա ինչ-որ առարկայի մասին տեղեկատվությամբ: Դա կարող է լինել լուսանկար, հուշանվեր, զարդօղակ (բրելոկ), զարդեղեն կամ ցանկացած այլ բան: Խնդրեք

մասնակիցներին, որ ցույց տան այդ առարկան և պատմեն, թե ինչու է այն իրենց համար կարևոր: Որպես դասընթացավար խաղը սկսեք ձեր օրինակով և ցույց տվեք մի առարկա, որը կարևոր նշանակություն ունի ձեզ համար և որը ձեզ մոտ է լինելու դասընթացի ժամանակ:

5. «Իմ անունը և գերբնական ուժը»

Այս իրար ծանոթացնող խաղի համար մասնակիցներին խնդրեք հերթով ներկայանալ՝ ասելով իրենց անունը և մի «գերբնական ուժ», որն իրենք երազել են ունենալ, օրինակ, թռչել, այլ լեզվով խոսել, ժամանակային ճամփորդություն անել ու հանդիպել մեկին անցյալից կամ ապագայից:

Այս բոլոր նմուշ-խաղերի նպատակը թեթև ու ակտիվացնող մթնոլորտ ստեղծելն է՝ թույլ տալով մասնակիցներին անձնական մակարդակում իրար հետ մերձենալ: Այս խաղերը դրական տոնայնություն են հաղորդում ողջ դասընթացին: Հիշեք ադապտացնել ընտրված խաղերը մասնակիցների թվին և նրանց նախընտրություններին:

Մերձեցման խաղ/երի ավարտին շնորհակալություն հայտնեք բոլորին և անցեք հաջորդ քայլերին՝ 1) դասընթացի ժամանակ ընդհանուր կանոնների սահմանում 2) ակնկալիքների մասին հայտնում և 3) նախապատրաստում դասը վարելուն և անհրաժեշտ նյութերի նախապատրաստում:

Ընդհանուր կանոնների սահմանում (5 րոպե)

Մերձեցման խաղից հետո մասնակիցներին հիշեցրեք դասընթացի ժամանակ որոշակի կանոններ ունենալու և դրանց հետևելու կարևորության մասին: Խնդրեք, որ մասնակիցներն իրենք սահմանեն այդ կանոնները: Հիշեք, որ այդ ցանկում պետք է լինեն կանոններ գաղտնապահության, հարգալից և ոչ բռնի հաղորդակցության, ժամանակին ներկայանալու մասին (եթե որևէ մաս բաց են թողել և պետք է հաջորդ թեմային ներկայանան):

Ակնկալիքների հայտնում (5 րոպե)

Խնդրեք մասնակիցներին մեկ րոպե տրամադրել և կաշուն թղթերի վրա գրի առնել դասընթացից իրենց ակնկալիքները, որոնք կփակցվեն գրատախտակին կամ պատին: Հիշեցրեք, որ դասընթացի ավարտին նրանք կվերանայեն իրենց գրած ակնկալիքները և կգնահատեն՝ արդյո՞ք դրանք բավարարվել են, թե ոչ:

Նախապատրաստում դասին

Յուրաքանչյուր դասից առաջ վարողները պետք է մասնակիցներին ապահովեն գունավոր կաշուն թղթերով, կոճգամներով, մարկերներով, մատիտներով, թղթային (ֆլիպչարտ) կամ ջնջովի (whiteboard) գրատախտակով:

Մոդուլ 1: Պատերազմի ազդեցությունը կանանց ու աղջիկների վրա

Ներածություն

Դասընթացի առաջին մոդուլը նվիրված է կանանց ու աղջիկների վրա զինված հակամարտության ազդեցությունն ուսումնասիրելուն, ներառյալ՝ դրանց փոխհատմանն այլ ռիսկային գործոնների հետ, ինչպիսիք են՝ տարիքը, հաշմանդամությունը, գենդերային ինքնությունը, սեռական կողմնորոշումը և էթնիկ պատկանելությունը, որոնց դեպքում մեծանում է նրանց խոցելիությունը և բռնության ենթարկվելու հավանականությունը: Այս բաժինը տեղեկություններ է հաղորդում պատերազմի ընթացքում և դրանից հետո գենդերային բռնության տարածված ձևերի մասին: Կանանց ու աղջիկների, ինչպես նաև այլ խոցելի խմբերի վրա զինված հակամարտության գենդերային ազդեցությունն ըմբռնելը թույլ է տալիս մասնագետներին/շահագրգիռ անձանց իրենց ծրագրերում և գործողություններում ազդակիր անձանց կարիքներն ավելի ճիշտ արտացոլել և անդրադառնալ դրանց ավելի համալիր ու գենդերազգային կերպով:

Դասի նպատակները

- Խորացնել մասնակիցների ըմբռնումը կանանց և աղջիկների վրա զինված/բռնի հակամարտության ուղղակի և անուղղակի ազդեցությունների մասին:
- Համալրել մասնակիցների գիտելիքները հակամարտության տարբեր փուլերում գենդերային բռնության ամենատարածված ձևերի մասին:
- Համոզվել, որ մասնակիցները կարող են սահմանել, թե հակամարտության ժամանակ առավել խոցելի խմբերը որոնք են:
- Ընդլայնել մասնակիցների գիտելիքները և ըմբռնումը, թե ինչպես է հակամարտությունն ազդում կանանց ու աղջիկների վրա և ինչպես է այն փոխհատվում ռիսկի այլ գործոնների հետ, ինչպիսիք են՝ տարիքը, հաշմանդամությունը, գենդերային ինքնությունը, սեռական կողմնորոշումը, էթնիկ պատկանելությունը և այլն:
- Մասնակիցների համար ստեղծել ապահով տարածք, որտեղ նրանք կարող են իրար պատմել և իրարից սովորել հակամարտության և բռնության մասին փորձառությունների մասին:

Նյութեր

- Նախապես պատրաստել սահիկաշար (ըստ դասընթացավարի նախընտրության)
- Ջնջովի գրատախտակ/ թղթային գրատախտակ քարտերը փակցնելու համար:
- Գունավոր մարկերներ, մատիտներ, գրիչներ, կաշուն թերթիկներ, կոճգամներ:
- Տպագիր/էլեկտրոնային տեքստային նյութեր:
- Առցանց դասընթացի դեպքում դասընթացավարը պետք է նախապես պլանավորի վիրտուալ սենյակները և դրանցում բաշխվելիք մասնակիցներին: Վիրտուալ հարթակներում մտադրոհ անելու գործիքներից են՝ IdeaFlip, IdeaBoardz, Jamboard ծրագրերը:

Հուշումներ դասընթացավարների համար

- Այս մոդուլը հիմնված է «Պատերազմի ընթացքում և հետպատերազմյան պայմաններում գենդերային բռնության կանխարգելում և արձագանքում. կանանց հկ-ների փորձառությունները և առաջարկները» գործիքակազմի 4-րդ գլխի վրա, որը վերնագրված է՝ «Պատերազմի ազդեցությունը կանանց ու աղջիկների վրա. պատերազմի հետևանքները կանանց ու աղջիկների վրա և կանանց նկատմամբ բռնության փոխհատվող չափերը. պատերազմի ընթացքում և դրանից հետո գենդերային բռնության տարածված ձևերը»: Օգտակար կլինի այս գլուխն ընթերցել նախքան այս մոդուլի դասը վարելը, քանի որ այն հավելյալ տեղեկություններ ու օրինակներ է պարունակում զինված հակամարտությունների՝ գենդերով պայմանավորված տարբեր փորձառությունների մասին:

- Գենդերային բռնության տարբեր ձևերի մասին քննարկումները կարող են լինել հուզախառը և ծայրաստիճան անձնական, քանի որ հակամարտությունների իրավիճակներում հայտնված մարդկանցից շատերն են հանդիպել սեռական/գենդերային հիմքով բռնության անձամբ կամ իրենց հարազատ անձի օրինակով: Եթե մասնակիցներից մեկը շատ հուզված վիճակում է հայտնվում, դասընթացավարները պետք է ունենան նման իրավիճակին արձագանքելու պլան և իրագործեն այն, օրինակ՝ ընդմիջում հայտարարել բոլորի համար, ընդմիջում տալ մասնակցին և թույլ տալ, որ նա դուրս գա սենյակից կամ ձեռնպահ մնալ մասնակիցներին հարցեր տալուց կամ քննարկումներին մասնակցելու քաջալերանքից:

- Վարողը պետք է հիշի, որ ավանդապահ միջավայրերում որոշ գենդերային հարցերի մասին բարձրաձայնելը զգայուն խնդիր է: Մտածեք, թե թեմաները և վարժանքները ինչպես կարող եք ներկայացնել այնպես, որ դրանք մշակութորեն ընդունելի ու հարիր լինեն ու դիմադրություն չառաջացնեն:

- Խորհուրդ է տրվում նախապատրաստել հետևյալ տպագիր նյութերը գործիքակազմի համատեքստին ու մեթոդաբանությանը համապատասխան՝ պատերազմի փուլերի սահմանումները, գենդերային բռնության տարբեր ձևերի բացատրությունը, զինված հակամարտության ընթացքում գենդերային բռնության տարածված ձևերի ցանկը, հասարակության խոցելի խմբերի՝ երեխաների, ծերերի, հաշմանդամների վրա զինված հակամարտության ազդեցությունը (հղումները գործիքակազմը պարունակող փաստաթղթի կոնկրետ էջերի): Կարևոր է նաև նախապես տպել ու դասընթացի համապատասխան պահերին բաժանել խմբային աշխատանքների հրահանգները (ըստ դասընթացի անցկացման ձևի՝ տպագիր կամ էլեկտրոնային):

Մոդուլի պլան

ՊԼԱՆ		
ԺԱՄ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ 125 ԲՈՊԵ
	1] Ծանոթացում դասի նպատակներին և ընդհանուր տրամաբանությանը	5 րոպե
	2] Կարճ անդրադարձ կանանց ու աղջիկների վրա հակամարտությունների ուղղակի և անուղղակի ազդեցությանը. մտազրոհ	15 րոպե
	3] Հակամարտության տարբեր փուլերում գենդերային բռնության տարածված ձևերի ներկայացում. տեսություն	15 րոպե
	4] Քննարկում փոքր խմբերով	25 րոպե

	5] Փոքր խմբերի քննարկման արդյունքների ներկայացում	15 րոպե
	6] Զինված հակամարտության ժամանակ տարբեր խոցելի խմբերի բացահայտում և նրանց կյանքի վրա դրա առանձնահատուկ ազդեցության ներկայացում	10 րոպե
	7] Փոքր խմբերով քննարկում	30 րոպե
	8] Դասի ամփոփում	10 րոպե

Դասի պլանը

1] Ծանոթացում դասի նպատակներին և տրամաբանությանը

(5 րոպե)

- Վարողն ամփոփ ներկայացնում է դասի նպատակները
- Վարողը լսարանին տեղեկացնում է, որ դասի նպատակն է ըմբռնել, թե պատերազմն ինչ տարբեր ազդեցություններ ունի կանանց, աղջիկների և հասարակության այլ խոցելի խմբերի վրա, ինչպես նաև բացատրում է, որ կա տարբերություն հակամարտության թողած ուղղակի և անուղղակի ազդեցությունների միջև: Նախկինում հակամարտության գենդերային տարբերակում ունեցող ազդեցության մասին քննարկումները կենտրոնացած էին սեռական ու գենդերային բռնության վրա, սակայն կարևոր է հաշվի առնել մի քանի այլ գենդերային հարցեր և ռիսկի գործոններ, ինչի պատճառով պատերազմի հետևանքներն ավելի ճշգրտորեն են փաստագրվում, իսկ դրան տրվող քաղաքական ու ռազմավարական արձագանքն ավելի արդյունավետորեն է մշակվում:

2] Զինված հակամարտության ուղղակի և անուղղակի ազդեցությունը. քննարկում մտադրոհի միջոցով

(15 րոպե)



Առկա դասավանդման դեպքում

- Թղթային գրատախտակին անցկացրեք երկու սյունակ, մեկը՝ զինված հակամարտության ուղղակի, մյուսը՝ անուղղակի ազդեցության համար:
- Մասնակիցներին խնդրեք ազդեցության այս երկու տեսակների իրենց օրինակները բերել և ասել, թե ինչու է կարևոր երկուսն էլ հաշվի առնել/վերլուծել: Քննարկումը խթանելու նպատակով կարող եք ինքներդ մի քանի օրինակ բերել:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒՂՂԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ	ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՆՈՒՂԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Սպանություններ, վիրավորվածներ, հաճախակիացած սեռական և գենդերային բռնություններ, ընտանիքների մասնատում, հիվանդություններ, տեղահանություն, գաղթ, այրիացում, գույքի և եկամուտների կորուստ և այլն:	Երկարաժամկետ հետևանքներ, որոնք սոցիալական, հուզական և հոգեբանական վնաս են հասցնում մարդկանց, ազդում են մարդկանց տնտեսական ակտիվության և բարեկեցության վրա: Առողջապահության նվազ հասանելիություն, բացասական ազդեցություն վերարտադրողական առողջության վրա, հոգեվնասվածք, ընկճախտ, կանանց կողմից ընտանիքը միայնակ գլխավորելու բեռ, աղքատություն, սոցիալական կապերի քայքայում, գործազրկություն և այլն:

🌐 Հեռակա դասավանդման դեպքում

- Նախքան դասը վարողը պետք է մտազրոհի համար նախատեսված որևէ նախընտրելի հարթակով (IdeaFlip, Jamboard և այլն) գրատախտակ ստեղծի: Մտազրոհի պահը հասնելուն պես նա պետք է դրա հղումը գրուցարանով ուղարկի մասնակիցներին և խնդրի նրանց նախ՝ իրենց գաղափարները գրել առանձին փաստաթղթում, այնուհետև հերթով վիրտուալ թերթիկներ ստեղծել դրանց հիման վրա ու փակցնել վիրտուալ գրատախտակին: Այնուհետև մասնակիցները պետք է գրատախտակի էկրանը ցուցադրեն բոլորին և սկսեն քննարկումը: Միանման գաղափարները խմբավորելու համար թերթիկները կարելի է քաշել ու մոտեցնել իրար կամ դրանք վանդակի մեջ առնել:

3] Հակամարտության տարբեր փուլերում բռնության առավել տարածված ձևերը - տեսական մաս (15 րոպե)

- Գործիքակազմի բովանդակության ու մեթոդաբանության հիման վրա դասընթացավարը ներկայացնում է տեսական տեղեկություններ պատերազմի փուլերի մասին, այնուհետև ներկայացնում պատերազմի ընթացքում և դրանից հետո գենդերային բռնության առավել տարածված ձևերի մասին: Ստորև այդ տեղեկատվությունից պատահիկներ են:

Ակտիվ պատերազմական գործողություններ և արտակարգ իրավիճակ

Հակամարտության գագաթնակետը ուղղակի ֆիզիկական բռնության առավել թեժ ժամանակն է: Այս ժամանակահատվածում բոլոր կողմերի մարդիկ սպանվում են: Կողմերի միջև բնականոն հաղորդակցությունն ամենայն հավանականությամբ ընդհատվել է: Պաշտոնական հայտարարություններն ավելի շուտ մյուս կողմ/երի նկատմամբ մեղադրանքների տեսքով են: Անգեն քաղաքացիական բնակչության պաշտպանություն, 5 մոդուլից բաղկացած ներածական կուրս, հասանելի է հետևյալ հղումով՝ https://nonviolentpeaceforce.org/wp-Բովանդակություն/uploads/archive/UCPManual/2021_Course_Manual__Full_Text.pdf

Զգձգվող հակամարտություն

«Զգձգվող» հակամարտությունները տեղի են ունենում դրվագներով, շրջափուլերով, անվանվում են «սառեցված», բնութագրվում են երկարատև պարտիզանական պայքարով կամ երկարատև օկուպացիաներով կամ նույնիսկ պատերազմական գործողություններով, որոնցում բռնությունը տեղի է ունենում ավելի ցածր ինտենսիվությամբ, քան սովորաբար բնորոշ է զինված հակամարտությանը: Դրանք տատանվում են կարգավորման ու բռնության ակտիվացման բևեռների միջև: Պատերազմները և դրանց ամենակուլ ավերիչ ուժն ավելի եկարատև են դառնում, անվերահսկելի, քաղաքական լուծման ավելի նվազ ներուժով: Զգվող հակամարտությունները անվերջ պատերազմի կայուն հետևանքները <https://international-review.icrc.org/articles/protracted-conflicts-enduring-legacy-endless-war-ir912>

Հետպատերազմական

Հետպատերազմական համատեքստն այն անցումային շրջանն է, որն ընկած է անցյալում թողնված պատերազմի և ապագայում սպասվելիք խաղաղության միջև: Այս փուլում ուղղակի բռնի գործողությունները նշանակալիորեն դադարել են, որը հանգեցրել է լարվածության նվազմանը և հակամարտության մեջ ներքաշված կողմերի միջև

ավելի բնականոն հարաբերությունների հաստատմանը, ինչն էլ հնարավորություն է բացում վեճի ոչ բռնի քաղաքական լուծման համար:

Անգլերեն քաղաքացիական բնակչության պաշտպանություն, 5 մոդուլից բաղկացած ներածական կուրս, հասանելի է՝ https://nonviolentpeaceforce.org/wp-Բովանդակություն/uploads/archive/UCPManual/2021_Course_Manual_Full_Text.pdf

Պատերազմի ժամանակ և դրանից հետո գենդերային բռնության առավել տարածված ձևեր (Գործիքակազմի 4-րդ գլուխ)

Կանայք բռնության են ենթարկվում ինչպես **պատերազմի ժամանակ, այնպես էլ «հետպատերազմական» իրավիճակներում**, երբ պատերազմը կամ ճգնաժամը դադարել է: **Պատերազմի ժամանակ** կանայք ահազնալի մակարդակի բռնություն են կրում՝ բռնաբարության սպառնալիքներ, ընտանեկան բռնություն, թրաֆիքինգ (առևանգում և սեռական ստրկություն), հարկադիր ամուսնություն և հղիացում, սեռական ստորացում իրենց իսկ տներում, ինչպես նաև փախստականների ճամբարներում կամ բռնությունից փախուստի ճանապարհին: Գենդերային հիմքով սեռական բռնության սանձարձակողները չեն սահմանափակվում զինյալ դերակատարներով, այլև ներառում են պետական անվտանգային պաշտոնյաներին, խաղաղապահներին և քաղաքացիական անձանց: Գենդերային բռնությունը չի նվազում **հետպատերազմական պայմաններում**, ավելին՝ բռնության որոշ ձևեր ավելի մեծ թափ են ստանում: Կանայք իրենց տան մասնավոր տարածքներում ավելի բարձր մակարդակի ընտանեկան բռնության առջև են կանգնում, հարկադրված են լինում տարրական ծառայություններից զրկված լինել կամ ունենում են խիստ սահմանափակ հասանելիություն դրանց, բացառված են լինում որոշումների կայացումից և իրենց աշխատավայրերում ղեկավար դերերից, ամենօրյա ռեժիմով կրում են խտրական վերաբերմունք՝ պայմանավորված իրենց սեռով և գենդերային դերերով:

4] Թերթիկներով աշխատանք և կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի քննարկում. խմբային աշխատանք (25 րոպե)

- Թերթիկ – Գենդերային բռնությունը հակամարտության տարբեր փուլերում

	«ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄԱ-ԿԱՆ ՇՐՋԱՆ»	«ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ»	«ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՇՐՋԱՆ»
Կանանց նկատմամբ բռնության ֆիզիկական/սեռա- կան ձևերը			
Կանանց նկատմամբ բռնության հոգեբանական ձևերը (հոգեբանական ճնշումներ, վերբալ բռնություն)			
Բռնության կառուցվածքային ձևեր (համակարգային խտրականություն, որը թույլ չի տալիս կանանց հոգալ իրենց տարրական կարիքների մասին, ինչպիսիք են առողջապահության, պատշաճ կրթության հասանելիությունը, սեփականության, աշխատանքային, արժանապատիվ աշխատատեղերի իրավունքները)			

Առկա դասընթացի դեպքում

- Բաժանեք մասնակիցներին երեք փոքր խմբերի և նրանց տվեք երեք սյունակներով թերթիկը՝ գենդերային բռնությունը 1. «նախապատերազմական շրջանում», 2. «պատերազմական շրջանում», 3. «հետպատերազմական շրջանում»:
- Առաջին խմբին հանձնարարեք լրացնել առաջին սյունակը՝ «նախապատերազմական շրջանում» կանանց նկատմամբ բռնության ֆիզիկական, հոգեբանական և կառուցվածքային ձևերը, երկրորդ խմբին հանձնարարեք լրացնել երկրորդ սյունակը՝ «պատերազմական շրջանում» բռնության նույն ձևերը և երրորդին՝ «հետպատերազմական շրջանում»: Խմբերը կմտորեն իրենց իմացածի և զգացածի շուրջ:
- Յուրաքանչյուր խմբից մեկը հակիրճ կներկայացնի, թե ամեն շրջանում կանայք ինչ տեսակի բռնությունների միջով են անցնում, մասնավորապես՝ ըստ ֆիզիկական, հոգեբանական և կառուցվածքային ձևերի (յուրաքանչյուր խմբի համար տրվում է 5 րոպե, ընդհանուրը՝ 15 րոպե):
- Այս քննարկման ամփոփման ժամանակ մյուս խմբերի մասնակիցներին հարցրեք՝ ունեն հավելումներ մյուս սյունակների մասով կամ բռնության այլ ձևերի օրինակներ (թերթիկի նմուշը տրամադրվում է):

Հեռակա դասավանդման դեպքում

- Բացատրեք խմբային աշխատանքի հանձնարարությունը և մասնակիցներին զրուցարանի միջոցով տրամադրեք թերթիկի էլեկտրոնային տարբերակը: Այնուհետև բաշխեք մասնակիցներին վիրտուալ սենյակներում (յուրաքանչյուրում 3-4 մասնակից): Նախընտրելի է, որ դասընթացավարը նախապես որոշի, թե ո՞ր մասնակիցները ո՞ր վիրտուալ սենյակում են բաշխվելու, իսկ եթե դա չի արվել, ապա երկրորդ վարողը կամ վարողի օգնականը կարող է պատահական սկզբունքով մասնակիցներին բաշխել: Յուրաքանչյուր խմբում մեկը պետք է թերթիկը լրացնի ըստ քննարկման, իսկ քննարկման ավարտից և բոլորի վերադարձից հետո նա պետք է ցուցադրի իր էկրանը, որին կլինի լրացված թերթիկը՝ ըստ խմբային քննարկման արդյունքների:

5] Խմբային քննարկում (30 րոպե)

6] Ովքեր են զինված հակամարտության ժամանակ տարբեր խոցելի խմբերը և որոնք են պատերազմի հակամարտության առանձնահատուկ հետևանքները (10 րոպե)

- Դասընթացավարը մասնակիցներին բացատրում է, որ զինված հակամարտությունը հաճախ մարդկանց ավելի բարձր մակարդակի խտրականության և/կամ բռնության առջև է կանգնեցնում, հատկապես խոսքը խոցելի խմբերի մասին է՝ երեխաներ, ծերեր, հաշմանդամություն կամ քրոնիկ հիվանդություններ ունեցող անձինք, LGBSQ+ անձինք, որոշակի էթնիկ կամ կրոնական խմբերին պատկանող մարդիկ: Առանց այս խմբերի առանձնահատուկ խոցելիությունները հաշվի առնելու և դիտարկելու, թե նրանք ինչ մտավախություններ ունեն, նրանց կարիքները և առաջնահերթությունները չեն կարող բավարարվել:

 **Առկա դասավանդման դեպքում**

- Խոցելի խմբերի առանձնահատուկ խնդիրների, ռիսկերի և մտավախությունների մասին քննարկումը կանցկացվի «Համաշխարհային սրճարան» մեթոդի միջոցով (World café):

- Մասնակիցներին բաժանեք 4-5 խմբերի և հանձնարարեք խոցելի որևէ խումբ (երեխաներ/ աղջիկներ, տարեց կանայք, հաշմանդամ կանայք, էթնիկ/կրոնական փոքրամասնություն, LQFSF+ անձինք և այլն):

- Վարժանքը սկսվում է փոքր խմբերով (3-ից 5 հոգի) սեղանների շուրջ 10 րոպե քննարկումով:

- Յուրաքանչյուր խմբի տրվում է քննարկման հետևյալ հարցը (10-ական րոպեով յուրաքանչյուր շրջանին)՝ ինչ առանձնահատուկ խնդիրների կարող են խոցելի խմբերը բախվել զինված հակամարտության ժամանակ:

- Քննարկման առաջին շրջանի ավարտին փոքր խմբերի մասնակիցները տեղափոխվում են մյուս սեղան՝ բացի մեկից, որը մնում է որպես «սեղանավար» մյուս շրջանի համար, իսկ մյուսները համարվում են «ճամփորդներ»: «Ճամփորդներն» իրենց գաղափարները և կարծիքները բերում են նոր սեղանի շուրջ զրույցներ, իսկ «սեղանավարները» մնում են և ընդունում ճամփորդներին: Տարբեր խմբերի հետ մի քանի շրջան զրույց ունենալու հնարավորությունը մասնակիցներին խրախուսում է ակտիվորեն մասնակցել և իրար կապել տարբեր տեսակետներ:

- Սեղանավարը գլխավոր մտքերը գրի է առնում թղթի գրատախտակի վրա: Առնվազն երեք շրջան զրույցից հետո մասնակիցները կարող են վերադառնալ առաջին սեղանին: Սեղանավարը ներկայացնում է ընդհանուր քննարկման արդյունքները, իսկ մասնակիցները կիսվում են այլ սեղանների մոտ իրենց ունեցած քննարկումներով:

 **Հեռակա դասավանդման դեպքում**

- Դասընթացավարը բացատրում է խմբային աշխատանքի առաջադրանքը և մասնակիցներին բաշխում 3-4 վիրտուալ սենյակներում (յուրաքանչյուրում 3-4-ական հոգի), որոնցից յուրաքանչյուրին հանձնարարում է նախապես ընտրված խոցելի խմբի թեման: Խմբին հանձնարարվում է ընտրել մեկին, որը չի տեղափոխվի վիրտուալ սենյակներով, կմնա որպես «սեղանավար», որը խմբային քննարկումների արդյունքները գրի կառնի մինչև վարժանքի ավարտը: Առաջին շրջանի համար նախատեսված ժամանակի ավարտից հետո «ճամփորդները» կուղարկվեն այլ վիրտուալ սենյակներ: Առնվազն երեք շրջան զրույցից հետո մասնակիցները հետ կբերվեն ընդհանուր քննարկման հարթակ, որի ժամանակ սեղանավարները կներկայացնեն իրենց սենյակներում տեղի ունեցած քննարկումների արդյունքները՝ ցուցադրելով գրառումներն իրենց էկրանին կամ պարզապես կարդալով դրանք:

7] Դասի ամփոփում (10 րոպե)

- Դասի ավարտին դասընթացավարն առաջարկում է ֆիզիկապես ակտիվացնող մի վարժանք, որի ժամանակ մասնակիցները կարող են մտորել, թե ինչ են սովորել այս դասից:

 **Առկա դասավանդման դեպքում**

- Բոլորին խնդրեք շրջան կանգնել և մտածել մեկ բառով արտահայտված զգացողության մասին, որը ցույց է տալիս դասից/վարժանքից/գիտելիքների փոխանակումից իրենց զգացածը: Հետո

խնդրեք նրանց իրենց դեմքը և մարմինը նմանեցնել զմայլիկի կամ քանդակի, որը ցույց է տալիս այդ զգացողությունը: Անցեք շրջանով և խնդրեք, որ նրանք բարձրաձայն ասեն այդ բառը: Երբ բոլորը խոսեն, հավաստող խոսք ասեք ինչպես դրական, այնպես էլ բացասական զգացողությունների մասին: Մասնակիցներին վստահեցրեք, որ սա ապահով տարածք է զգացմունքներ արտահայտելու և հարցեր ուղղելու համար:

- Հարցրեք մասնակիցներին՝
 - Ինչ-որ մեկը կուզի կիսվել, թե ինչ է ինքը զգում այս պահին:
 - Ի՞նչ սովորեցիք դասին, որ մինչ այդ չգիտեիք: Ինչպես կարող եք դասից ստացած գիտելիքն օգտագործել ապագայում:

Եթե մասնակիցները շփոթմունքի մեջ ընկնեն, հիշեցրեք դասընթացի ծրագիրը և որ նրանք դեռևս մտորելու և խնդիրներին պատասխաններ գտնելու հնարավորություն կունենան:

Հեռակա դասավանդման դեպքում

- Մասնակիցներին շնորհակալություն հայտնեք դասի ընթացքում արտահայտած գաղափարների ու ակտիվ աշխատանքի համար: Խնդրեք նրանց մտածել ու բարձրաձայն ասել մի բառ, որը ցույց կտա, թե ինչ են իրենք զգում դասից սովորածի մասին: Երբ բոլորն իրենց զգացողություններն ու մտքերը ներկայացնեն, բացատրեք դասի հաջորդ քայլերի մասին, ներառյալ՝ նախքան հաջորդ հատվածին անցնելը ընդմիջման և հաջորդ թեմայի մասին: Հիշեցրեք նաև, որ ըստ դասընթացի ծրագրի՝ իրենք դեռևս հնարավորություն կունենան մտորելու և խնդիրներին պատասխաններ գտնելու համար:



Մոդուլ 2: Պատերազմի ժամանակ և դրանից հետո կանանց և երեխաներին պաշտպանելու համար պատասխանատու գլխավոր դերակատարները

Ներածություն

Պատերազմի ընթացքում և դրանից հետո բռնության բոլոր ձևերից կանանց ու աղջիկների պաշտպանության հարցին արդյունավետորեն անդրադառնալու համար մասնակիցները պետք է հասկանան, թե գենդերային բռնության կանխման ոլորտում ինչ հաստատություններ կան և որոնք են դրանց պատասխանատվության շրջանակները: Բացի դրանից՝ մասնակիցները պետք է ըմբռնեն այն տարբեր մոտեցումները, որոնք կիրառվում են պաշտպանության ժամանակ:

Դասի նպատակները

- Հասկանալ, թե որոնք են պատերազմի ընթացքում և դրանից հետո կանանց ու աղջիկների պաշտպանության համար պատասխանատու գլխավոր դերակատարները
- Հասկանալ, թե պատերազմի ընթացքում և դրանից հետո կանանց ու աղջիկների պաշտպանության համար պատասխանատու գլխավոր դերակատարները ինչ մոտեցումներ են կիրառում:

Նյութեր

- Սահիկաշար՝ ըստ դասընթացավարի հայեցողության:
- Թելի կծիկ
- Տպագիր դեպք/պատմություն, որը պետք է բաժանվի մասնակիցներին: Առցանց անցկացվող դասընթացի դեպքում, այն պետք է գետեղվի գրուցարանում:

Հուշումներ դասընթացավարների համար

- Այս մոդուլը հիմնված է «Պատերազմի ընթացքում և հետպատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելում և արձագանքում. կանանց հկ-ների փորձառությունները և առաջարկները» գործիքակազմի 3-րդ գլխի վրա, որը վերնագրված է՝ «Պատերազմի ժամանակ և դրանից հետո կանանց ու աղջիկների պաշտպանության համար պատասխանատու գլխավոր դերակատարները»: Օգտակար կլինի այս գլուխն ընթերցել նախքան տվյալ մոդուլի դասը վարելը, քանի որ այն հավելյալ տեղեկություններ է պարունակում գենդերային հիմքով բռնությանը համակարգային արձագանք տալու գործընթացում ներառված շահագրգիռ կողմերի մասին:
- Դասընթացավարը պետք է ծանոթանա տվյալ երկրի իրավիճակին և ուսումնասիրի գենդերային հիմքով բռնության ինստիտուցիոնալ և ոչ ինստիտուցիոնալ արձագանքների մասին, ինչը մոդուլի տեսական մասը ներկայացնելիս կարող է օգտակար լինել:
- Հնարավորություն տվեք, որ մասնակիցները խոսեն իրենց համայնքներում գլխավոր դերակատարների մասին և քննարկումը բաց պահեք գենդերային բռնության դեպքում այլընտրանքային մոտեցումների և գործողությունների (օրինակ՝ կրոնական համայնքի դերի) համար:

Մոդուլի Պլան

ՊԼԱՆ		
ԺԱՄ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՌՂՈՒԹՅՈՒՆԸ 55 ԲՈՊԵ
	1] Տեսական մաս – պատերազմի ընթացքում և դրանից հետո կանանց և աղջիկների պաշտպանության համար պատասխանատու հիմնական դերակատարները	15 բոպե
	2] Վարժանք	20 բոպե
	3] Քննարկում	15 բոպե
	4] Դասի ամփոփում	5 բոպե

Դասի պլան

1] Տեսական մաս - պատերազմի ընթացքում և դրանից հետո կանանց և աղջիկների պաշտպանության համար պատասխանատու գլխավոր դերակատարները (15 բոպե)

- Պատերազմի ժամանակ և դրանից հետո կանանց և աղջիկների պաշտպանության համար գլխավոր դերակատարների ներկայացում – բովանդակությունը Գործիքակազմից (3-րդ գլուխ)
- Սահիկաշար՝ ըստ դասընթացավարի հայեցողության:

2] Վարժանք

Պատմություն/դեպք

38-ամյա կինն արդեն տասը տարի է՝ ենթարկվում է ընտանեկան բռնության: Բռնարարը նրա ամուսինն է, պատերազմի նախկին մասնակից: Նրա մոտ առկա են հետտրավմատիկ սթրեսային համախտանիշի նշաններ, բայց նա երբեք չի դիմել հոգեկան առողջության հաստատություններ, ոչ էլ մասնագիտական աջակցություն է փորձել ստանալ: Նրա մոտ պարբերաբար առաջանում են պատերազմի տեսարաններով հիշողություններ: Նա շատ հաճախ է ակոհոլ օգտագործում: Կինը նրան բազմիցս խնդրել է դիմել բժշկի, բայց նա հրաժարվել է:

Բռնության վերջին դրվագը տեղի ունեցավ երեկ գիշեր, երբ ամուսինը ծեծեց նրան ու ծանր վնասվածքներ հասցրեց նրա ոտքերին, ձեռքերին ու գլխին: Ծեծելու ժամանակ տանն էին նրանց անչափահաս աղջիկն ու տղան: Ընտանիքն ապրում է բազմաբնակարանային շենքում, և հարևանները ուստիկանություն զանգահարեցին: Եկան ուստիկաններ, ինչպես նաև սոցիալական աշխատող: Ամուսինը կալանավորվեց 24 ժամով: Կինը ուստիկաններին և սոցիալական աշխատողին պատմեց տեղի ունեցածը: Սոցիալական աշխատողը նրան ուղեկցեց շտապ օգնության ծառայություն, որտեղ նրան տրամադրվեց բուժօգնություն: Կինն այնուհետև վերադարձավ տուն:

Այսօր առավոտյան կինը նորից գնաց ոստիկանական բաժանմունք, որպեսզի ցուցմունք տա ընտանեկան բռնության և նախորդ երեկոյան տեղի ունեցածի մասին: Այնուհետև նա դիմեց սոցիալական աշխատողի և խոսեց աշխատակցի հետ իր ապրած բռնությունների մասին: Քանի որ կնոջ ամուսինը շատ վտանգավոր է և տանը պատերազմից մնացած զենք է պահում, որոշում կայացվեց կնոջն ու երեխաներին տեղավորել ապաստարանում: Այնուհետև կինն այցելեց ընտանեկան բժշկին, որպեսզի ներկայացնի ընտանեկան բռնությունից ստացած վնասվածքների մասին իր գանգատները (վնասվածքների մասին հաղորդում): Կինը զանգ է ստանում դատախազությունից, որպեսզի ներկայանա և ցուցմունք տա: Այնուհետև կինը գնում է Սոցիալական աշխատանքի կենտրոն, որպեսզի ընթացք տա երեխաների խնամակալության գործընթացին: Գործը քննվում է դատարանում, և կինը պետք է ներկայանա դատարան, որպեսզի վկայություն տա: Բռնարարին չի գոհացնում երեխաներին այցելելու իր իրավունքների մասին որոշումը, և նա սպառնում է կնոջը: Կինը ստիպված է նորից գնալ ոստիկանություն և նորից հաղորդում ներկայացնել հանցագործության մասին: Երեխաները դպրոցում խնդիրներ ունեն, կնոջը կանչել են դպրոց, նա պետք է գնա և խոսի ուսուցիչների հետ: Ահռելի ճնշումների և սարսափի զգացողությունների պատճառով կինը դիմում է հոգեկան առողջության կենտրոն, որտեղ ստանում է ամբուլատոր բուժում:

 **Առկա դասավանդման դեպքում** (20 րոպե)

- **Քայլ 1** – Դասընթացավարը խնդրում է, որպեսզի մասնակիցներից 9 հոգի մասնակցի վարժանքին, իսկ մնացածները դիտեն:
- **Քայլ 2** – Դասընթացավարը յուրաքանչյուրին մի դեր է տալիս, որը ներկայացնում է բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության ենթարկված կանանց պաշտպանության օղակում ներգրավված հաստատություն/կազմակերպություն:
 - Դերերը՝
 - Կին
 - Ոստիկանություն
 - Առողջապահական հաստատություններ
 - Սոցիալական աջակցության կենտրոն
 - Դատախազություն
 - Ապաստարան
 - Դատարան
 - Դպրոց
 - Հոգեկան առողջության կենտրոն
- **Քայլ 3** – Վարողն ընտանեկան բռնություն վերապրած կնոջը տալիս է թելի կծիկ, նա թելի մի ծայրը պահում է իր մոտ:
- **Քայլ 4** – Այնուհետև վարողը կարդում է պատմությունը/դեպքը: Ամեն անգամ, երբ ընթերցվում է որևէ հաստատության կամ կազմակերպության մասին, այդ հաստատությունը/կազմակերպությունը ներկայացնող մասնակցին է նետվում կծիկը, որն իր մոտ թելն ամրացնելուց հետո կծիկը նորից հետ է նետում բռնությունը վերապրած կնոջ դերը կատարող մասնակցին: Այսպես շարունակվում է բոլոր դերակատարների հետ:

- **Քայլ 5** – Վարժանքի վերջում տեսանելի է դառնում խճճված կծիկը և մասնակիցները հասկանում են, թե որքան բարդ իրականություն է ստեղծվում բռնությունից տուժածի համար այդ մասին հաղորդում ներկայացնելուց հետո, թե քանի հաստատություն և կազմակերպություն է ներգրավված լինում ընտանեկան բռնության հետ կապված ընթացակարգերում, որն էլ ավելի է բարդացնում կնոջ համար օգնություն ստանալը:

- **Քայլ 6** – Վարժանքի քննարկում (15 րոպե)

3] Վարժանքի քննարկում (15 րոպե)

արցեր մասնակիցներին՝

- Ի՞նչ կարելի է եզրահանգել վարժանքից:
- Կա՞ն հաստատություններ, որոնց մասին չնշվեց:
- Արդյո՞ք այս իրավիճակը նման է ձեր համայնքներում իրավիճակին:

Հեռակա դասավանդման դեպքում

- Հեռակա դասավանդման դեպքում դասընթացավարը պետք է վարժանքը փոքր-ինչ հարմարեցնի վիրտուալ հարթակի պայմաններին: Նա նախ պետք է նախապատրաստի նկարելու համար նախատեսված ինչ-որ վիրտուալ գրատախտակ: Այնուհետև նա մասնակիցներից մեկին պետք է խնդրի կարդալ պատմությունը/դեպքը, իսկ մեկ ուրիշին՝ վիրտուալ գրատախտակի մեջտեղում պատկերել բռնությունը վերապրածին և նրա շուրջը տարբեր հաստատություններին: Պատմության ընթերցմանը զուգահեռ մասնակիցները կամ վարողը գծեր են քաշում հնչած հաստատությունների անվանումներից դեպի բռնությունից տուժածին: Վերջում գրատախտակը ցույց կտա, թե ինչ դեր ու դիրք ունեն տարբեր հաստատությունները և ընթացակարգերը, որոնց հետ ստիպված է գործ ունենալ կինը:
- Քննարկման ժամանակ վարողը մասնակիցներին խնդրում է կարծիքներ հայտնել վարժանքի մասին, ինչպես նաև այն մասին, թե իրենց տեղական համատեքստում կանայք ինչ փորձառություններ են ունենում հաստատությունների հետ շփվելիս (օգտվել վերը նշված հարցերից):

4] Մոդուլի ամփոփում (5 րոպե)

- Մասնակիցներին հնարավորություն տվեք արտահայտել իրենց ամփոփիչ մտքերը, տպավորությունները, հարցերը, ինչպես նաև շնորհակալություն հայտնեք նրանց մասնակցության համար:



Մոդուլ 3: Կանանց հկ-ների կողմից կիրառվող ռազմավարությունները՝ կապված պատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելման և արձագանքման հետ

Ներածություն

Դասընթացի երրորդ մոդուլը միտված է մասնակիցների կողմից պատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելման և արձագանքման նոր ռազմավարություններ մշակելուն:

Դասի նպատակները

- Ճանաչանալ Գործիքակազմի 6-րդ գլխում ներառված մի քանի կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունների հետ:
- Անդրադառնալ արտակարգ իրավիճակներում, ձգձգվող հակամարտությունների ընթացքում և հետպատերազմական շրջանում մասնակիցների՝ որպես կանանց իրավունքների պաշտպանների և ակտիվիստների, փորձառությանը:
- Ապահով տարածք ստեղծել քննադատական մտածողության համար և խորը քննարկումներ անցկացնել պատերազմի տարբեր փուլերում կիրառվող ռազմավարությունների գործնական հարցերի շուրջ:
- Քաջալերել մասնակիցներին հանդես գան իրենց սեփական առաջարկներով ու ռազմավարությամբ:

Նյութեր

- Նախքան դասը սկսելը խորհուրդ է տրվում մոդուլի պլանը ներկայացնել մասնակիցներին կա՛մ տեղում, կա՛մ հեռակա դասավանդման դեպքում՝ էլեկտրոնային:
- Կաշուն թերթիկներ, գունավոր թղթեր մասնակիցների համար:

Հուշումներ դասընթացավարների համար

- Այս մոդուլը հիմնված է «Պատերազմի ընթացքում և հետպատերազմական պայմաններում գենդերային բռնության կանխարգելում և արձագանքում. կանանց հկ-ների փորձառությունները և առաջարկները» գործիքակազմ պարունակող հրատարակության 6-րդ գլխի վրա, որը վերնագրված է՝ «Կանանց հկ-ների կողմից կիրառվող ռազմավարությունները՝ կոնֆլիկտային իրավիճակներում գենդերային բռնությունը կանխարգելելու և արձագանքելու համար»: Խորհուրդ է տրվում, որ վարողները նախապես ծանոթանան, թե ովքեր են մասնակիցները, կյանքի ինչ հանգամանքներում են նրանք առնչվել պատերազմական իրավիճակներին (եթե նման տեղեկատվություն դասընթացի մասնակցության նախապատրաստական ձևաթղթում առկա է) և ինչ հանգամանքներում են աշխատել:

- Դասընթացից մեկ շաբաթ առաջ վարողները պետք է որ ավելի պարզ պատկերացում ունենան մասնակիցների և պատերազմների հետ կապված նրանց փորձառությունների մասին: Այդ տեղեկատվությունը կօգնի նրանց կենտրոնանալ Մոդուլ 3-ում ներկայացվելիք ռազմավարությունների երեք հիմնական տեսակներից մեկի վրա՝ 1) պատերազմի և արտակարգ իրավիճակներում, 2) ձգձգվող հակամարտությունների ժամանակ, 3) հետպատերազմական շրջանում և երկարաժամկետ կտրվածքով: Որևէ մեկ տեսակի ռազմավարության վրա կենտրոնանալը կախված կլինի մասնակիցների փորձառությունների նմանությունից, սակայն եթե լսարանը շատ բազմազան լինի, դասընթացավարները միգուցե ստիպված լինեն օրինակներ բերել պատերազմի և հակամարտության բոլոր երեք փուլերի առնչությամբ կամ ներկայացնեն ռազմավարություններ, որոնք կիրառելի են բոլոր փուլերի նկատմամբ:
- Դասընթացի օրը վարողներին խորհուրդ ենք տալիս տպել մասնակիցներին բաժանվելիք նյութեր՝ ըստ ընտրված ռազմավարությունների: Հեռակա դասավանդման դեպքում դրանք պետք է ուղարկել էլեկտրոնային փոստով:
- Դասընթացավարները պետք է նախապես տպեն մոդուլի պլանը և այն ձեռքի տակ ունենան, ինչպես նաև ներկայացնեն այն մասնակիցներին:

Մոդուլի Պլան

ՊԼԱՆ		
ԺԱՄ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ 100 ԲՈՊԵ
	1] Ծանոթություն/ողջույնի խոսք (ովքեր են ներկա, ինչպես են ինձ զգում այսօր)	20 րոպե
	2] Ռազմավարությունների թեմայի ներկայացում (ինչ են դրանք նշանակում ներկայիս գործիքակազմի համատեքստում, տարբեր տեսակի ռազմավարությունների մասին ակնարկ)	10 րոպե
	3] Ըստ մասնակիցների փորձառության՝ ընտրված կոնկրետ տեսակի ռազմավարության խորացված ներկայացում (խնդրել մասնակիցներին կարդալ ռազմավարությունները)	10 րոպե
	4] Ընդմիջում	15 րոպե
	5] Վարժանք փոքր խմբերով	25 րոպե
	6] Վարժանքի ամփոփում մեծ խմբով	10 րոպե
	7] Նոր ռազմավարությունների մասին մտքերի հավաքագրում	5 րոպե
	8] Դասի ամփոփում	5 րոպե

Դասի պլան

1] Ծանոթություն/ողջույնի խոսք (20 րոպե)

Եթե դասընթացը բաժանված է երկու օրերի, ողջունեք մասնակիցներին և հերթով հարցրեք հետևյալ հարցերը՝ «Ո՞վ է ներկա սենյակում» և «Ինչպե՞ս են ինձ զգում այսօր»: Այս հարցերի միջոցով մասնակիցները կվերհիշեն իրար և կմտածեն, թե սենյակում իրենք ինչ հուզական վիճակում են գտնվում և իրենց կզգան ներկայում:

Սակայն, եթե Մոդուլ 3-ը անց է կացվում նախորդ երկու մոդուլների օրը, ապա բաց թողեք այս հարցերը և անցեք 3-րդ մոդուլի նպատակների ներկայացմանը:

- Ծանոթանալ Գործիքակազմի 6-րդ գլխում ներառված մի քանի կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունների հետ:

- Անդրադառնալ արտակարգ իրավիճակներում, ձգձգվող հակամարտությունների ընթացքում և հետպատերազմական շրջանում մասնակիցների՝ որպես կանանց իրավունքների պաշտպաններ և ակտիվիստներ, փորձառությանը:

- Ապահով տարածք ստեղծել քննադատական մտածողության համար և խորը քննարկումներ անցկացնել պատերազմի տարբեր փուլերում կիրառվող ռազմավարությունների գործնական հարցերի շուրջ:

- Քաջալերել մասնակիցներին հանդես գան իրենց սեփական առաջարկներով ու ռազմավարությամբ:

Նախքան բուն նյութին անցնելը մասնակիցներին հարցրեք, թե արդյոք ունեն հարցեր կամ մտորումներ 1-ին և 2-րդ մոդուլների կապակցությամբ: Մի րոպե ժամանակ տվեք նրանց մտքերը թղթին հանձնելու համար: Խնդրեք նաև կաշուն թղթերի վրա գրել, թե ինչ են ակնկալում սովորել այս մոդուլից:

2] Ռազմավարությունների մասին ներկայացում (10 րոպե)

Դասը սկսեք՝ ներկայացնելով ռազմավարությունները և բացատրելով, թե ինչ նշանակություն ունեն դրանք գործիքակազմի մեջ: Հիշեցրեք մասնակիցներին, որ դրանք հավաքագրվել են կանանց կազմակերպությունների կողմից՝ պատերազմի ընթացքում և հետպատերազմական շրջանում իրենց փորձառությունների հիման վրա:

Ներկայացրեք ռազմավարությունների տեսակներն՝ ըստ պատերազմի կամ հակամարտության տարբեր փուլերի:

Հարցրեք մասնակիցների կարծիքը ձեր ներկայացրածի վերաբերյալ:

Դիտարկեք հետևյալ հարցադրումները մասնակիցներին.

- Կա՞ն իրենց գործունեության մեջ ուղղություններ, որ իրենք կանվանեին ռազմավարություն: Ինչո՞ւ և ինչպե՞ս են ռազմավարությունները տարբերվում մեր գործունեության մեջ այլ գործառույթներից:

- Նախկինում պատերազմական կամ հետպատերազմական իրավիճակներում գենդերային բռնության դեպքերի հետ աշխատելիս նրանք իրականացրել են արդյոք այնպիսի գործողություններ, որոնք տեղավորվում են ռազմավարությունների նշված կատեգորիաներում:

Այս հարցերը կարող են հիմք նախապատրաստել մտորելու նոր ռազմավարություններ մշակելու շուրջ: Հիշեցրեք մասնակիցներին, որ այդ հարցերին պարտադիր չէ անմիջապես պատասխանել, դրանց մասին կարելի է մտածել մինչև դասի ավարտը: Առկա դասավանդման դեպքում մասնակիցներին հիշեցրեք, որ կարող են այս երկու հարցերի հետ կապված մտքերը գրի առնել և հետագայում քննարկման ժամանակ ներկայացնել: Եթե դասընթացն անց է կացվում առցանց, առաջարկեք, որ մասնակիցներն իրենց մտքերը գրեն զրուցարանում:

3] Կոնկրետ ռազմավարությունների շուրջ խորացված քննարկում (10 թույլ)

Բացատրեք, որ պատրաստվում եք ավելի խորությամբ անդրադառնալ այն ռազմավարություններին, որոնք ընտրել եք մասնակիցների փորձառության հիման վրա (եթե այս տեղեկությունները հարցաշարի կամ ձևաթղթի վրա հավաքվել են), այսինքն՝ պատերազմի այն փուլի հիման վրա, որում գտնվում են մասնակիցները: Քանի որ ներկայացվելիք տեղեկատվությունը թրիգերային կարող է լինել, հիշեցրեք մասնակիցներին, որ եթե հուզմունք առաջանա կամ չուզենան շարունակել քննարկումը, նրանք ազատ են սենյակից դուրս գալ և մի քանի թույլ դադար տալ:

Մասնակիցներին խնդրեք բարձրաձայն կարդալ ռազմավարությունների ցանկը (ամեն մեկը կարող է կարդալ մեկ ռազմավարություն) և նրանց ժամանակ տվեք ընտրված ռազմավարության շուրջ քննարկում վարելու համար:

Ուշադիր եղեք ժամանակային սահմանափակումներին: Միգուցե քննարկման համար ընտրվի 10 ռազմավարություն, բայց 10 թույլի ընթացքում մարդիկ կհասցեն քննարկել առավելագույնը 5 ռազմավարություն: Եթե մյուս ռազմավարություններին ժամանակ չի մնում, մի անհանգստացեք, դասի նպատակը ավելի խորը մտորումների ու քննարկումների համար տեղ բացելն է: Հիշեք և հիշեցրեք մասնակիցներին, որ մնացածի մասին մանրամասն գրված է գործիքակազմում: Գործիքակազմի համապատասխան էջերի մասին հուշումներ ունեցեք ձեռքի տակ, որ բարձրաձայն ասեք դրանք կամ առցանց դասավանդման դեպքում գրեք զրուցարանում:

4] Ընդմիջում (15 թույլ)

5] Վարժանք փոքր խմբերով (25 թույլ)

Խմբային դերախաղի նպատակն է մղել մասնակիցներին մտածելու (որպես կանանց հկ-ների կամ այլ նախաձեռնությունների/խմբերի ներկայացուցիչներ) ռազմավարությունների մասին, որոնք կարող են կանխարգելել պատերազմների և արտակարգ իրավիճակների ժամանակ կանանց նկատմամբ գենդերային բռնությունը՝ հաշվի առնելով տարբեր կանանց առանձնահատուկ փորձառությունները (ըստ նշանակված դերերի):

Վարժանք. նշանակված դերերը

Քայլ 1: Դուք 76-ամյա կին եք, ապրում եք ակտիվ պատերազմի փուլում գտնվող երկրի սահմանամերձ գյուղում: Չունեք կողակից, երեխաները դեռ երիտասարդ տարիքից տեղափոխվել են արտերկիր: Հարևանների և հարազատների հետ ակտիվ շփումներ և ամուր կապեր չկան: Բացի դրանից՝ հարևաններից շատերն իրենք էլ տարեց են:

Քայլ 2: Դուք 12-ամյա աղջիկ եք, որի կրթությունն ընդհատվել է ձեր բնակության վայրում տեղի ունեցող ընդհարումների պատճառով: Ձեր համայնքի դպրոցները փակվել են: Հեռավոր մի տղամարդ բարեկամ խոստացել է ձեր ծնողներին կեղծ փաստաթղթեր պատրաստել Ձեզ համար, որ դուք կարողանաք նրա հետ պատերազմից փախչել՝ սահմանն անցնելով: Ձեր ծնողները ծանրութեթև են անում բարեկամի հետ Ձեզ արտասահման ուղարկելու հնարավորությունը, որպեսզի փրկեն Ձեր կյանքը:

Քայլ 3: Ձեզ ու ձեր երեք երեխաներին նոր են տվել փախստականի կարգավիճակ, ահազանցող պատերազմը ձեզ ստիպել է փախչել երկրից: Ձեր ամուսինը տարբեր պատճառներով հրաժարվում է փախստականի կարգավիճակի դիմելուց, որի պատճառով նրան թույլ չեն տալիս դուրս գալ երկրից և

վերամիավորվել ընտանիքի հետ: Ձեզ և ձեր երեխաներին տեղավորել են փախստականների ճամբարում, որում հիգիենիկ պայմանների լուրջ խնդիրներ կան և որը գերբնակեցված է:

Քայլ 4: Դուք ֆիզիկական հաշմանդամություն ունեցող կին եք, ինչի պատճառով ձեր շարժունակությունը սահմանափակված է: Մեկ այլ քաղաքում ապաստան եք հայցել, քանի որ ձեր քաղաքում պատերազմ է ընթանում: Ապաստարանի ձեր դիմումները մի քանի անգամ մերժել են այն պատճառաբանությամբ, որ հարմարություններ չկան, որոնք կբավարարեն հաշմանդամություն ունեցող, շարժունակության սահմանափակում ունեցող անձանց կարիքներին:

Քայլ 5: Դուք լեսբի եք, պատերազմի սկսվելուց հետո դուք ուզում եք փախչել և վերամիավորվել ձեր զուգընկերուհու հետ, որն արդեն տեղափոխվել է: Ձեր ժամանման երկրի սահմանին Ձեզ տեղեկացնում են, որ մուտք գործելու իրավունք չունեք: Սակայն Ձեզ ոչ մի պաշտոնական պատճառաբանություն չի տրվում՝ բացի անձնագրի լուսանկարի մասին դիտարկումից, որ դրանում Ձեր մազերը երկար են, իսկ այժմ դուք տարբերվող արտաքին ունեք: Ի վերջո, Ձեզ արգելվում է մուտքն այդ երկիր:

Քայլ 6: Ձեր ամուսինը ծառայում է զինուժում և բարձրաստիճան զինվորական է: Քանի որ նրա աշխատավարձը բարձր է, նա պնդել է, որ դուք մնաք տանը և չաշխատեք: Նա տուն է գալիս միայն երեք ամիսը մեկ շատ կարճ ժամանակով, քանի որ երկրում պատերազմ է: Այս մեկ-երկու շաբաթների ընթացքում, որ նա ձեզ հետ է, հիմնականում ձեզ հետ առանց պատճառի վիճում ու կռիվներ է սարքում:

Քայլ 7: Դուք կին եք, ով հոգեկան առողջության կենտրոնում նախկինում բուժում է ստացել: Քանի որ երկրում պատերազմ է, Դուք ապաստարանի հայց եք ներկայացրել, սակայն մերժում եք ստացել առանց պաշտոնական պատճառաբանության և փաստաթղթերի: Դուք տեղյակ եք, որ ապաստարանի անձնակազմի անդամներից մեկը աշխատել է հոգեկան առողջության հաստատությունում:

Քայլ 8: Դուք սևամորթ կին եք, ուսումնական նպատակներով մեկնել եք հեռավոր մի երկիր, որում բնակչությունը բավականին համասեռ էթնիկ կազմ ունի: Ուսման երկրորդ տարում երկրում պատերազմ է սկսվում: Շատերն են գաղթում, դուք նույնպես որոշում եք մեկնել, քանի որ համալսարանն անժամկետ փակվում է: Սահմանին Ձեզ ասում են, որ հերթի մեջ առաջնայնություն է տրվում տվյալ երկրի քաղաքացիներին: Ինչ-ինչ պատճառով Ձեզ առաջարկում են ժամանակավոր ճամբար և ասում են, որ սպասեք մինչև սահմանն անցնելու Ձեր հերթը կգա, որը սակայն, երկար կարող է տևել: Ոչ մի պաշտոնական փաստաթուղթ չի տրվում սահմանապահների կողմից Ձեր նկատմամբ որոշման համար:

 **Առկա դասավանդման դեպքում**

- **Վարժանքը սկսեք՝ բացատրելով խմբային դերախաղի նշանակությունը** (2 րոպե).
 - Խնդրեք խմբին բաժանվել 2 կամ 3 փոքր խմբերի:
 - Խմբերի բաժանվելուց հետո յուրաքանչյուրին տվեք տարբեր կանանց դերերը:

- **Խնդրեք խմբին քննարկումը կենտրոնացնել վարժանքով հանձնարարված դերերում գտնվող կանանց աջակցելու վրա, այսինքն՝** իբրև կանանց հկ մշակել պատերազմի ընթացքում այդ կանանց նկատմամբ գենդերային բռնությունը կանխարգելելու կամ բռնության ենթարկվածներին աջակցելու ռազմավարություն: (10 րոպե).
 - Հարցադրումներ – Ի՞նչ ռազմավարություններ են գալիս ձեր մտքին: Մտածեք երեք հիմնական ռազմավարություն, որի շնորհիվ, որպես կանանց հկ, դուք կաջակցեք անձին կամ գենդերային հիմքով բռնությունը կանխելու ուղղությամբ, կամ կոնկրետ իրավիճակում հայտնված կնոջն աջակցելու համար: Դրանք գրեք թղթային գրատախտակին: Եթե երեքից ավելի ռազմավարություն եք մտածել, դրանք նույնպես գրի առեք:

- Մասնակիցներին քննարկման ժամանակ տվեք և հետևեք, որ առնվազն երեք ռազմավարություն իրենք գրի առնեն և որպես կանանց հկ-ներ դերերում հայտնված անձանց աջակցելու մտքեր հղանան:
- Յուրաքանչյուր խմբին խնդրեք, որ մեկ-երկու ռազմավարություն ներկայացնեն մյուսին – ընդհանուրը 10 րոպե:
- **Խմբային քննարկման ամփոփում** (3 րոպե)
 - Մասնակիցներին խնդրեք, որ դերերից դուրս գալու վարժանք անեն, ինչ-որ շարժումներ թարմանալու համար կամ ներկայում զգալուն ուղղված վարժանքներ, եթե տեսնում եք, որ մասնակիցները հուզականորեն տարվել են վարժանքով:

Այս վարժանքը կարելի է անել ինչպես առկա, այնպես էլ հեռակա դասավանդման դեպքերում առանց սահմանափակման: Հեռակայի դեպքում մասնակիցները կբաշխվեն վիրտուալ սենյակներում:

6] Ռազմավարությունների մասին ամփոփում մեծ խմբով (10 րոպե)

- Քննարկումը սկսեք՝ մեծ խմբի մասնակիցներին խնդրելով ներկայացնել իրենց զգացողություններն ու կարծիքները խմբային վարժանքից հետո ներկայացված տարբեր ռազմավարությունների մասին (ամեն մեկին տալ խոսելու կարճ ժամանակ):
- Հարցադրումներ՝ որքանով են այս ռազմավարությունները գործնականում կիրառելի, եթե ռազմավարություններից որոշները կիրառելի չեն, ինչն է պատճառը, ինչ գործոններ կարող ենք խանգարել ռազմավարությունները գործնականում կիրառելուն:

7] Նոր ռազմավարությունների մասին գաղափարների հավաքագրում (5 րոպե)

- Խնդրեք խմբից մեկ կամ երկու կամավորի դեռևս չհնչած նոր ռազմավարությունների մասին մտքերը գրի առնել գրատախտակի վրա:

8] Մոդուլի ամփոփում (5 րոպե)

- Մասնակիցներին հնարավորություն տվեք արտահայտել իրենց ամփոփիչ մտքերը, տպավորությունները, հարցերը, ինչպես նաև շնորհակալություն հայտնեք նրանց մասնակցության համար:



Մոդուլ 4: Շահերի պաշտպանություն

Ներածություն

4-րդ մոդուլի միջոցով մասնակիցները կըմբռնեն, թե որքան կարևոր է կանանց հկ-ների կողմից շահերի պաշտպանության առանց բռնության գործունեությունը հակամարտության ընթացքում և դրանից հետո: Մոդուլի բովանդակությունը և օրինակները գործնական են և ցույց են տալիս, թե ինչպես է շահերի պաշտպանությունն ազդում որոշում կայացնողների և հանրային հաստատությունների քաղաքականությունների, պրակտիկաների և վարքի վրա՝ կապված հակամարտության ընթացքում և դրանից հետո կանանց իրավունքների հետ: Բացի դրանից՝ մոդուլը պետք է որ ոգևորի մասնակիցներին մտածելու շահերի պաշտպանության իրենց աշխատանքի և ուղղակի ու անձնական շփումների միջոցով ջատագովության մասին, որը հաճախ է կազմում հասարակական կազմակերպությունների գործունեության մասը:

Դասի նպատակները

- Ավելի լավ հասկանալ պատերազմական և հետպատերազմական պայմաններում կանանց հկ-ների կողմից շահերի պաշտպանության և քաղաքական որոշումների միջև կապը:
- Խորապես ընկալել, թե կանանց հկ-ների կողմից տեղական, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում շահերի պաշտպանության աշխատանքներն ինչպես կարող են ազդեցություն ունենալ պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում կանանց և աղջիկների կյանքերի վրա:
- Բարձրացնել մասնակիցների գիտելիքների մակարդակը պատերազմական և հետպատերազմական իրավիճակներում շահերի պաշտպանության տարբեր գործողությունների մասին:
- Մասնակիցների համար ստեղծել ապահով տարածք անձնապես և կազմակերպությունների մակարդակում շահերի պաշտպանության առումով հանդիպած մարտահրավերների և փորձառությունների մասին բարձրաձայնելու համար:

Նյութեր

- Նախապատրաստել սահիկաշար – տեսական մաս (վարողի հայեցողությամբ)
- Նյութեր նախապատրաստել փոքր խմբերով աշխատանքի համար
- Ջնջվող գրատախտակ
- Գունավոր մարկերներ, մատիտներ, գրիչներ, կաշուն թղթեր, կոճգամներ:

Հուշումներ դասընթացավարներին

- Ծանոթացեք գործիքակազմի բովանդակությանը, հատկապես այն բաժնին, որը վերաբերում է յուրաքանչյուր երկրի իրավիճակին և հակամակարտության նկարագրությանը (Հայաստան, Վրաստան, Բոսնիա և Հերցեգովինա, Ուկրաինա): Ծանոթացեք այդ երկրներում կիրառված և գործիքակազմում նկարագրված կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունների որպես օրինակներ, քանի որ դրանցից մի քանիսը ցույց են տալիս կանանց հկ-ների կողմից շահերի պաշտպանության գործողություններ:

- Մոդուլի ներածական բաժնի (տեսության) համար պատրաստեք PowerPoint սահիկաշար շահերի պաշտպանության, գլխավոր սկզբունքների և քայլերի մասին ընդհանրական տեղեկատվությամբ: Նախապատրաստեք օրինակելի պրակտիկայի մի քանի օրինակ, որոնք մասնակիցներին կոգնորեն իրենց համայնքներում գործողություններ կատարել:
- Մասնակիցներին ժամանակ տրամադրեք անձնական փորձառությունների և գենդերային բռնության և կանանց իրավունքների ոլորտում շահերի պաշտպանության և ջատագովության իրենց աշխատանքի մասին վերհիշելու համար:

Մոդուլ Պլան

ՊԼԱՆ		
ԺԱՄ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ 100 ԲՈՊԵ
	1] Շահերի պաշտպանության, գլխավոր սկզբունքների և արդյունավետ քայլերի մասին տեսական ներածություն	25 րոպե
	2] Կանանց շարժումների պատմությունից շահերի պաշտպանության նախաձեռնությունների օրինակներ	10 րոպե
	3] Աշխատանք փոքր խմբերով	25 րոպե
	4] Ընդմիջում	15 րոպե
	5] Փոքր խմբերի աշխատանքի ներկայացում	20 րոպե
	6] Ամփոփում և ամբողջ դասընթացի փակում	5 րոպե

Դասի պլան

Շահերի պաշտպանության ներածություն (15 րոպե)

Տեսական մասը կարող է ներառել հետևյալը

Ի՞նչ է շահերի պաշտպանությունը

Շահերի պաշտպանությունը ժողովրդավարական գործիք է հանրային բարեկեցությանը վերաբերող կոնկրետ հարցերի վրա ուշադրություն հրավիրելու և արդյունավետ սոցիալական փոփոխության հասնելու համար: Դրա նպատակն է ձայն տալ հանրությանը կամ կոնկրետ խմբերի և նրանց համար ապահովել քաղաքական իշխանության մատչելիությունը: Շահերի պաշտպանությունը ինչ-որ հարցին սատարելու և իշխանություն ունեցողներին համոզելու գործողությունն է, որ նրանք նույնպես սատարեն այդ հարցին:


Շահերի պաշտպանության գլխավոր սկզբունքները

- **Վստահելիություն** Սա նշանակում է, որ այլոց աչքերում կազմակերպությունը վստահելի է, ինչպես վստահելի է նաև շահերի պաշտպանության ձեր գործունեության մեջ օգտագործվող տեղեկատվությունը: Վստահելիությունը կարող է բարձրանալ փաստերի պատշաճ ճշտմամբ և խնդրի խորը ուսումնասիրմամբ: Ուղերձներ հղելիս շատ կարևոր է, որ դուք ինքներդ հավատաք դրանց և որ դրանք հիմնված լինեն փաստերի վրա:

- Պատասխանատվություն** Սա այն եղանակն է, որով բոլոր շահագրգիռ կողմերին ապացուցում եք, որ դուք վստահելի եք որպես կազմակերպություն կամ անձ, որը ներկայացնում է այլ կանանց ու աղջիկների շահերը: Պատասխանատվությունը բարձրացնելու եղանակներից մեկը գենդերային բռնությունը վերապրած կանանց շահերի պաշտպանության ձեր աշխատանքներում ներգրավելն է:
- Լեգիտիմություն** Արդյո՞ք դուք և ձեր կազմակերպությունը լեգիտիմ ձևով ներկայացնում եք այն խմբին, որին փորձում եք օգնել: Արդյո՞ք նրանք ներառված են գործունեության մեջ: Եթե այո, ինչպե՞ս:
- Կողմնորոշում** Կանանց և երեխաների ծառայությունները չեն վերաբերում միայն նրանց տրամադրվող ուղղակի ծառայություններին, դրանք վերաբերում, ինչպես նաև խորհրդանշում են ձեր վերաբերմունքը, երբ դուք փորձում եք քաղաքական մթնոլորտի վրա ազդեցություն ունենալ և երբ ներկայացնում եք ձեր շահառուներին: Երբ դուք ջատագովում եք ավելի լավ ծառայություններ, դուք առաջնորդի դեր եք ստանձնում, և դա առնչվում է այն մարդկանց նկատմամբ ձեր վերաբերմունքին, ում շահերը դուք պաշտպանում եք:
- Ուժի կամ իշխանության ընկալում** Այսինքն՝ մենք տեղյակ ենք ուժի տարբեր ձևերին, որոնցով օժտված են հանրային հաստատությունները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: Մենք կարող ենք ուժը վերլուծել ըստ տարբեր ընկալումների՝ հասարակության մեջ աստիճանակարգային հարաբերության, ուժ կարողության և ուժ ցանցեր ստեղծելու իմաստներով, ինչպես նաև ներքին ուժ, որը հիմնված է գենդերային հավասարության և կանանց իրավունքների մասին հզոր համոզմունքի վրա, ինչի համար էլ մենք իրականացնում ենք ջատագովություն:

Շահերի արդյունավետ պաշտպանության քայլերը - պլան

Շահերի պաշտպանության ջանքերն առավելագույնս արդյունավետ են, երբ դրանք թիրախային են և կոնկրետ: Հստակորեն սահմանեք ձեր նպատակները և անհրաժեշտ փոփոխությունները: Պլանի մշակումը ենթադրում է հետևյալ առանցքային տարրերի դիտարկումը:



- Խնդրի բացահայտում** Սկսեք շահերի պաշտպանության միջոցով լուծվելիք խնդիրը հստակորեն ձևակերպելուց: Իրականացրեք խորը հետազոտություն, որպեսզի պարզեք դրա բուն պատճառները, հետևանքները և դրան առնչվող հարակից համատեքստը: Այս քայլն ապահովում է, որ շահերի պաշտպանության ձեր ջանքերն ուղղված լինեն կոնկրետ ու լավ ընկալելի խնդրին:

- Նպատակի և խնդիրների ձևակերպում** Ձևակերպեք հստակ և չափելի նպատակներ, որոնց ցույց են տալու շահերի պաշտպանության ձեր գործողությունների ցանկալի արդյունքները: Սահմանեք նպատակների ենթանպատակները կամ խնդիրները, որոնք նպաստում են մեծ նպատակների իրագործմանը: Մեծ նպատակները վերաբերում են լայն տեսլականին, իսկ խնդիրները ցույց են տալիս այն քայլերը, որոնցով դուք հասնելու եք դրանց: Այս քայլը հաջողության ճանապարհային քարտեզն է և օգնում է նաև գնահատել շահերի պաշտպանության ձեր գործունեության ազդեցությունը:
- Թիրախների որոշում** Որոշեք, թե ովքեր են այն գլխավոր անձինք, խմբերը կամ հաստատությունները, որոնք ունեն բավարար ուժ ցանկալի փոփոխությունն առաջ բերելու հարցում: Նկատի առեք ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային թիրախներին և գնահատեք նրանց ազդեցությունը հարցի վրա: Թիրախներին որոշելը կարևոր է, որպեսզի կարողանաք շահերի պաշտպանության ձեր ուղերձները համապատասխանեցնել յուրաքանչյուր թիրախին:
- Ուղերձի ձևակերպում** Ձևակերպեք ազդեցիկ և հակիրճ ուղերձներ, որոնք հաղորդում են ձեր խնդրի, ցանկալի փոփոխության և ձեր պայքարին աջակցելու օգուտների կարևորությունը: Ուշադրություն գրավելու և աջակցություն ապահովելու համար ձեր ուղերձները պետք է պահպանեն նույն գիծը, ըմբռնելի լինեն, առաջացնեն հուզական արձագանք:
- Գործողությունների պլանի/մեթոդաբանության/տակտիկայի մշակում** Մշակեք գործողությունների մանրամասն պլան, որը կնախանջի այն կոնկրետ գործողությունները, տակտիկաները և ժամանակացույցը, որի հիման վրա իրականացնելու եք շահերի պաշտպանության ձեր ռազմավարությունը: Պլանը պետք է ներառի լրատվամիջոցների ներգրավում, դաշինքներ կազմելուն, հանրային իրազեկումը բարձրացնելուն, քաղաքականություն փոխելուն, ինքնաբուխ ակտիվիզմին վերաբերող քայլեր: Լավ կազմված գործողությունների պլանն ապահովում է, որ շահերի պաշտպանության ձեր գործողությունները լինեն համակարգված և հետևողական:

Գործողությունների պլանի նմուշ

Ստորև ներկայացված է շահերի արդյունավետ պաշտպանություն իրականացնելուն ուղղորդող նմուշ, որում նկարագրված են նպատակը, խնդիրները, թիրախները, մեթոդաբանությունը/տակտիկան, անհրաժեշտ ռեսուրսները և ժամանակացույցը:

	Նկարագրություն .	Օրինակ .
ԽՆԴԻՐ	հստակորեն սահմանեք այն կոնկրետ խնդիրը, որը ցանկանում եք լուծել շահերի պաշտպանության ձեր գործողություններով	Բռնի հակամարտությունների ընթացքում և դրանցից հետո գենդերային բռնության զոհ դարձած անձանց համար հոգեկան առողջության ծառայությունների խիստ սակավություն
ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ	ձևակերպեք նպատակը, որին ցանկանում եք հասնել շահերի պաշտպանության ձեր քայլերով	ավելի մեծ ֆինանսավորում և քաղաքական աջակցություն հետպատերազմական տարածքներում գենդերային բռնությունից տուժած անձանց համար հոգեկան առողջության ծառայությունները բարելավելու համար

ԹԻՐԱԽ	որոշեք, թե ովքեր են այն անձինք, խմբերը կամ հաստատությունները, որոնք առանցքային դեր ունեն ձեր նպատակն իրագործելու հարցում	Միջազգային հումանիտար կազմակերպություններ, պատասխանատու քաղաքական մարմիններ, հակամարտությունից տուժած տարածքների տեղական առողջապահական մարմիններ
Մեթոդաբանություն /Տակտիկա	առանձնացրեք այն մոտեցումները և տակտիկաները, որոնք կգործադրեք ձեր թիրախների վրա ներգործելու համար	Համագործակցել հումանիտար կազմակերպությունների կամ տեղական հկ-ների հետ և իրականացնել կարիքների գնահատում, ջատագովել, որ քաղաքական գործիչները բարձրացնեն ֆինանսավորումը, խթանել լրատվամիջոցների կողմից խնդրի հրատապության մասին լուսաբանումը
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	բացահայտեք, թե պլանն իրագործելու համար մարդկային, ֆինանսական և նյութական ինչ ռեսուրսներ կպահանջվեն	Հոգեկան առողջության վերապատրաստված մասնագետներ, հետազոտության և ջատագովության արշավների ֆինանսավորում, համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	Ժամանակացույցի կազմում սահմանեք հիմնաքարային արդյունքներ և վերջնաժամկետներ	առաջին ամսում իրականացնել կարիքների գնահատում, երկրորդ ամսում արդյունքները ներկայացնել պատասխանատու քաղաքական մարմիններին, երրորդ ամսում նախաձեռնել լրատվական արշավներ հանրային իրազեկումը բարձրացնելու նպատակով

2] Կանանց շարժումների պատմության ընթացքում շահերի պաշտպանության օրինակներ⁷ (10 ռուպե)

2000 թ. կանանց ֆորում՝ «Վերջ ատոմային զենքերին»

2000 թ. Ճապոնիայի կանայք դիմեցին կանանց ու աշխարհի մարդկանց միավորելու ջանքերը, որպեսզի արգելվեն ատոմային զենքերը և մարդկությունը փրկվի բնաջնջումից:

2000 թ. օգոստոսի 5-ին 1800-ից ավելի կին հավաքվեց Հիրոշիմա քաղաքում ատոմային զենքերի վերացման պահանջով: Տեղի ունեցան ատոմային զենքի օգտագործման և փորձարկման մասին աշխարհի տարբեր ծայրերի հավաքված կանանց վկայությունների լուսմներ: Այս ակցիայի միջոցով կանայք կոչ արեցին ՄԱԿ-ի անդամ պետություններին ընդունել խիզախ որոշում և վերացնել ատոմային զենքերը:

7 Հավելյալ տեղեկությունների կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ <https://www.oecd.org/social/gender-development/1896464.pdf>

Լիբերիայի կանանց նախաձեռնությունը

1993 թ. Լիբերիայում ընթացող պատերազմի թեժ օրերին Մերի Բրաունել անունով մի կին՝ նախկին ուսուցչուհի, որոշեց ստեղծել կանանց խումբ, որը ճնշում կգործադրեր խաղաղության անօգուտ տարածաշրջանային բանակցությունների վրա և հանդես կգար պատերազմի դեմ: Մարդկային տառապանքի անտանելիության պայմաններում Բրաունելին հատկապես զարմացնում էր կանանց լռությունը: «Արդեն հինգ տարի է՝ պատերազմ է, բայց ոչինչ չի արվում բարձրաձայնելու, մեր ձայները լսելի դարձնելու համար: Այո, եղել են կանանց կազմակերպություններ, բայց դրանք հիմնականում օգնության հարցերով են մտահոգված եղել» - Բրաունելի խոսքերն են: Նա բանակցությունների վրա ազդող կանանց խումբ ստեղծելու միտքը քննարկեց մի քանի ընկերների հետ:

Ձևավորվեց խումբ, որն ազգային ռադիոյով տարածեց գովազդային ծանուցում, որ Մոնրովիայի քաղաքապետարանի մոտ տեղի է ունենալու հանրահավաք, որին կոչ է արվում, որ միանան կանայք: Այս պահից սկսած, 1994 թ. հունվարից ձևավորվում է Լիբերիայի կանանց նախաձեռնությունը, որն էլ վերաճում է շարժման՝ ներառելով բոլոր կանանց՝ անկախ նրանց էթնիկ, կրոնական կամ քաղաքական պատկանելության:

Նախաձեռնության ռազմավարությունն էր միացյալ դիրքորոշում ընդունել ողջ բնակչության վրա ազդեցություն ունեցող հարցերի շուրջ և ջատագովել «զինաթափում մինչև առաջիկա ընտրությունները»: Նախաձեռնության անդամների թիրախում էին խաղաղության բանակցություններին մասնակցող բոլոր կուսակցությունները: Նրանք նաև մի ծրագիր սկսեցին, որի միջոցով օգնում էին հավաքագրել հրաձգային զինամթերք: Նախաձեռնության հիմնական նպատակն էր, սակայն, մասնակցել խաղաղության տարածաշրջանային բանակցություններին և դրանց ժամանակ տարբեր խմբակցությունների առաջնորդներին ջատագովել ժողովրդի ներսից բխող տեսակետները: Թեև նրանք երբեք չդարձան բանակցությունների պաշտոնական մասնակիցներ, նրանք շատ ազդեցիկ դարձան բանակցությունների ողջ ընթացքում և հանդես եկան որպես խոստումների պահպանման վերահսկողներ:

Հյուսիսային Իռլանդիայի կանանց կռաւիցիա

1996 թ. հակամարտության թատերաբեմ դարձած Հյուսիսային Իռլանդիայում երկու կին՝ դասախոս Մոնիկա ՄքՈւիլիամսը և սոցալիստող Փրոլ Սեյգարը որոշեցին հակամարտող կաթոլիկ և բողոքական համայնքների կանանց հավաքել և միավորել մի շարժման մեջ, որը ջատագովում էր կանանց ավելի բարձր ներգրավվածություն քաղաքական որոշումների կայացման մեջ և խաղաղության բանակցություններում գենդերային հավասարություն: Նրանք հիմնադրեցին Հյուսիսային Իռլանդիայի կանանց կռաւիցիան, որը գրանցվեց որպես քաղաքական կուսակցություն և համախմբեց ինչպես նախկինում քաղաքականապես ակտիվ կանանց, այնպես էլ կանանց համայնքներից:

Կռաւիցիայի նպատակն էր մասնակցել խաղաղության գործընթացին և ապահովել, որ կանանց տեսակետները ներառված լինեն խաղաղության բանակցություններում: Կռաւիցիան մասնակցեց մի եզակի ընտրական գործընթացի, որը հնարավորություն էր ընձեռում փոքր քաղաքական կուսակցություններին մասնակցել խաղաղության բանակցություններին, որոնք պետք է ընթանային «Հյուսիսային Իռլանդիայի ֆորում» անվանվող ընտրովի մարմնում: Մոնիկա ՄքՈւիլիամսը և Փրոլ Սեյգարը դարձան ֆորումի անդամ, իսկ բոլոր կուսակցություններին ներառող բանակցություններն ընթացան 1998 թ. Դրանք հանգեցրին «Ավագ ուրբաթի համաձայնագրի» ստորագրմանը, որով վերջ տրվեց էթնիկ-ազգայնական հիմքով հակամարտությանը և Հյուսիսային Իռլանդիայում 1960 թ. -ից պարբերաբար ընթացող բռնություններին:

Կռաւիցիայի հիմնական սկզբունքներն էին՝ ներառում, հավասարություն և մարդու իրավունքներ: Որպես բացառապես կանանց կուսակցություն, կռաւիցիան կարևոր դեր խաղաց Հյուսիսային Իռլանդիայում խաղաղության գործընթացում և այդպիսով բարձրացրեց աշխարհում խաղաղության համաձայնագիր ստորագրած կանանց թիվը:

Կոալիցիայի կին անդամների վրա հաճախ էին հարձակվում և թշնամանք արտահայտում տղամարդ քաղաքական գործիչները: Կոալիցիայի անդամները ստիպված էին խոսել նաև սեռիզմի (sexism) և գենդերային հիմքով խտրականության մասին: Նրանք սոցիալական տարբեր ծագումներ ունեցող և տարբեր համայնքներում ապրող կանանց կոչ էին անում մասնակցել տեղական հանրային քաղաքական գործընթացներին, որպեսզի ներգործություն ունենան և փոփոխություն բերեն իրավիճակին, նպաստեն կանանց համար կարևոր հարցերի լուծմանը, ներառյալ՝ գենդերային հիմքով բռնության կանխարգելմանը և վերապարծներին աջակցություն տրամադրելուն: Դա հնարավոր էր անել Հյուսիսային Իռլանդիայի ներկայացուցչական մարմիններում քաղաքական մասնակցության միջոցով:

Հյուսիսային Իռլանդիայի կանանց կոալիցիան որպես կուսակցություն իր գոյությունը պահպանեց մինչև 2006 թ.: Չնայած կազմալուծմանը՝ դրա շատ անդամներ շարունակում են իրենց ակտիվ իրավապաշտպանական գործունեությունը՝ աջակցելով կանանց խմբերին և ջատագովելով ինստիտուցիոնալ այնպիսի շրջանակ, որը կանանց շահերը պաշտպանում է:

3] Վարժանք փոքր խմբերով (25 րոպե)

- Մասնակիցներին բաժանեք փոքր խմբերի, յուրաքանչյուրում՝ մինչև հինգ հոգի:
- Դասընթացավարը պետք է յուրաքանչյուր խմբի տա հակամարտություն տեսած մեկ երկրի մասին տեղեկատվություն (Հայաստան, Բոսնիա և Հերցեգովինա, Վրաստան և Ուկրաինա): Նյութի բովանդակությունը վերցված է գործիքակազմից (Գլուխ 1):
- Յուրաքանչյուր խումբ պետք է կազմի շահերի ջատագովության արշավ իրենց հանձնարարված երկրի համատեքստում: Շահերի պաշտպանությունը պետք է վերաբերի կանանց իրավունքներին: Խմբից մեկը պետք է վերջում արդյունքները ներկայացնի բոլորին:
- Յուրաքանչյուր խումբ պետք է պատասխանի հետևյալ հարցերին (դրանք պետք է գետեղված լինեն բոլոր մասնակիցների համար տեսանելի մի տեղ)։
 - Կարո՞ղ եք արդյոք սահմանել, թե ձեզ հանձնարարված երկրում խնդիրը որն է:
 - Ո՞րն է շահերի պաշտպանության նպատակը: Ի՞նչ ենք ուզում փոխել: Ինչո՞ւ
 - Որո՞նք են առավելությունները/ուժեղ կողմերը: Որո՞նք են թերությունները/թույլ կողմերը:
 - Ո՞վ կարող է մեզ օգնել: Կարո՞ղ ենք դա մենակ անել:
 - Ի՞նչ մակարդակի ջատագովություն է անհրաժեշտ (տեղական, համապետական, միջազգային):
 - Մտածեք, թե շահերի պաշտպանության ինչ միջոցառում է կարելի իրականացնել:

4] Ընդմիջում (15 րոպե)

5] Փոքր խմբերի քննարկման արդյունքների ներկայացում (20 րոպե)

- Դասընթացավարը փոքր խմբերի ներկայացուցիչներին հերթով հրավիրում է իրենց խմբային աշխատանքի արդյունքները ներկայացնել:
- Արդյունքները լսելուց հետո դասընթացավարը հրավիրում է բոլոր մասնակիցներին արտահայտել իրենց կարծիքը և ուղղում է հետևյալ հարցերը.

- Ո՞րն էր խմբային աշխատանքի ժամանակ հիմնական դժվարությունը և ինչո՞ւ:
- Խմբային աշխատանքի ո՞ր մասն էր ամենալավը, ինչը գոհացրեց ձեզ:
- Դժվա՞ր էր արդյոք համաձայնության գալ շահերի պաշտպանության նպատակը/ առաջնահերթությունը սահմանելու շուրջ:

6] Մոդուլի ամփոփում (5րոպե)

- Մասնակիցներին հնարավորություն տվեք արտահայտել իրենց ամփոփիչ մտքերը, տպավորությունները, հարցերը, ինչպես նաև շնորհակալություն հայտնեք նրանց մասնակցության համար:



Դասընթացի ամփոփում և փակում

Դասընթացի այս հատվածը նախատեսված է բարեհաջող փակման և մասնակիցների հետագա անելիքների շուրջ գաղափարների հավաքագրման համար:

- Դասընթացը բարեհաջող փակելու համար կարևոր է այն անմոռանալի դարձնել մասնակիցների համար, հնարավորություն բացել վերջին անդրադարձները, գաղափարները և մտքերն արտահայտելու համար:
- Կարևոր է մասնակիցներին հարցնել, թե արդյոք դասընթացից ունեցած իրենց ակնկալիքները կյանքի են կոչվել, այսինքն՝ դասընթացավարը ուշադիր է եղել հնչած և գրի առնված ակնկալիքների նկատմամբ, ներառել է դրանք դասընթացի մեջ, իսկ նրանք, որոնք չեն ներառվել, հաշվի են առնվել դասընթացը բարելավելու լույսի ներքո:
- Խորհուրդ ենք տալիս, որ դասընթացավարները խնդրեն մասնակիցներին գնահատել դասընթացը, որի համար նրանք նախապատրաստել են հարցաշար:

Անդրադարձ (5 րոպե)

Փակելիս շնորհակալություն հայտնեք մասնակիցներին նման զգայուն թեմայի շուրջ դասընթացի համար իրենց ժամանակը տրամադրելու և ներկա գտնվելու համար: Յուրաքանչյուր մասնակցի ներդրումը շատ կարևոր է, ուստի ժամանակ տրամադրեք, որ նրանք իրենց վերջին անդրադարձներն անեն ու արտահայտվեն: Կարող եք հարցնել՝ «Դասընթացից ինչ կտանեք ձեզ հետ այսօր»: Թող մասնակիցները կիսվեն դասընթացից ստացած տպավորություններով և ապրումներով, նույնիսկ եթե դրանք կարող էին նյարդայնացնող կամ բացասական լինել: Թույլ տվեք կիսվել այս պահերով նույնպես: Կարևոր է բարձրաձայնել, որ ցանկացած մասնակից պետք է լսված ու տեսնված լինի, որ նրանց յուրաքանչյուրի ներդրումը կարևոր է և կարող է նպաստել փոփոխություններին:

Ակնկալիքներ (5 րոպե)

Մասնակիցներին հարցրեք՝ արդյո՞ք նրանց ակնկալիքները բավարարվել են դասընթացի ժամանակ և եթե ոչ, ապա որոնք չեն կյանքի կոչվել: Կարևոր է դրանք գրի առնել (դասընթացավարը պետք է նախապես աչքով անցկացրած լինի սկզբում նախանշված ակնկալիքները): Ժամանակ տվեք, որ մասնակիցներն արտահայտվեն բավարարված կամ չբավարարված ակնկալիքների մասին:

Գնահատում (5 րոպե)

Ինչպես դասընթացից առաջ էիք նախնական թերթիկներ ուղարկել մասնակիցներին, դասընթացից հետո նույնպես խորհուրդ ենք տալիս գնահատման թերթիկներ ուղարկել կամ դասընթացի ավարտից անմիջապես հետո, կամ հաջորդող մի քանի օրերի ընթացքում: Դասընթացը կատարելագործելու համար մեծ նշանակություն ունի ինչպես դասապրոցեսի, ներկայացված նյութերի որակի, այնպես էլ դասընթացավարների հմտությունների գնահատումը մասնակիցների կողմից: Գնահատման թերթիկն անհրաժեշտ է մշակել նախապես՝ օգտվելով ձևաթղթերից կամ ինտերնետային հարթակներից (Google Forms, SurveyMonkey և այլն): Ստորև առաջարկում ենք դրանցում զետեղվելիք հարցերի օրինակներ (ուշադրություն դարձրեք, որ առաջարկված որոշ հարցեր ավելի կոնկրետ են՝ հաշվի առնելով թեմայի զգայունությունը):

Ընդհանուր բնույթի հարցեր

1. Ինչպե՞ս կգնահատեք դասընթացն ընդհանուր առմամբ:
2. Որքան՞ով բավարարեց դասընթացը ձեր ակնկալիքները:
3. Դասընթացի ի՞ր հատվածներն էին ձեզ համար առավել օգտակար և ինչ՞ի:
4. Դասընթացի ի՞ր հատվածն էր ձեզ համար ամենաքիչ օգտակարը և ինչ՞ի:
5. Ինչպե՞ս եք կիրառելու դասընթացի ժամանակ սովորածը ձեր աշխատանքում:

Առավել զգայուն հարցեր

1. Ինչպե՞ս կգնահատեք ապահովության ձեր զգացողությունը դասընթացի անցկացման վայրում:
2. Ինչպե՞ս կգնահատեք դասընթացավարի ապրումակցման կարողությունը, երբ դա անհրաժեշտ էր:

Միջոցառման ընդհանուր կազմակերպումը

1. Ինչպե՞ս կգնահատեք գրանցման գործընթացը և դասընթացի բովանդակության մասին նախապես տրամադրված տեղեկությունները:
2. Արդյո՞ք բավարար եք գնահատում առանձին թեմաներով դասերի տևողությունը:
3. Ինչպե՞ս կգնահատեք դասապրոցեսի համար ընտրված մեթոդները/վարժանքները:



Աղբյուրներ

Ստորև մի շարք օգտակար աղբյուրներ են, որոնց օգնությամբ դասընթացավարները կարող են պատրաստվել դասընթացին: Ներկայացված են բազմազան ձեռնարկներ, որոնք ինչպես թեմաներին, այնպես էլ դասավանդման մեթոդներին վերաբերող հավելյալ տեղեկություններ են պարունակում:

De Zwaan, N. and Feenstra, E.D (2015), Gender, Peace and Conflict Training Manual. Cooperative for Assistance and Relief Everywhere, Inc. (CARE), available at https://www.kpsrl.org/sites/default/files/publications/files/769_gender_peace_and_conflict_manual.pdf

Health Policy Project (2014), Preventing Gender-based Violence: A Training Manual, Washington, DC: Futures Group, Health Policy Project, available at https://www.healthpolicyproject.com/pubs/367_MozambiqueGBVManualFINAL.pdf

International Rescue Committee (2008), Core Concepts in GBV, Facilitators Manual, available at <https://gbvresponders.org/wp-Բովանդակություն/uploads/2015/07/Core-Concepts-Facilitator-Manual.pdf>

Rights for all (2005), The guideline for legislative advocacy, Fedra Idzaković, available at https://pravazasve.ba/download/zagovaranje-bs-vodic_za_zakonodavno_zagovaranje.pdf

Sophia Close, Hesta Groenewald and Diana Trimiño Mora (2010), Facilitation guide: Gender-Sensitive Conflict Analysis, Conciliation Resources, SaferWorld, available at <https://www.c-r.org/learning-hub/gender-sensitive-conflict-analysis-facilitators-guide>

Theresa de Langis/UN Women Timor-Leste (2015), Women, Peace and Security (WPS) - YES! Learning Pack, available at <https://asiapacific.unwomen.org/en/digital-library/publications/2015/05/yes-learning-pack>

Transparency International BiH, PhD Randall Puljek-Shank, PhD Zlatiborka Popov-Momčinović (2022), Manual for advocacy fork of NGO in Bosnia and Herzegovina, available at <https://ti-bih.org/wp-Բովանդակություն/uploads/2022/12/TI-BIH-PRIRUCNIK-ZA-ZAGOVARANJE-BHS-WEB.pdf>

UNFPA (2011), Managing Gender-based Violence Programmes in Emergencies, E-learning and Companion Guide, available at <https://www.unfpa.org/publications/managing-gender-based-violence-programmes-emergencies>

UNHCR (2016), SGBV Prevention and Response, Training Package, available at <https://www.unhcr.org/media/sgbv-prevention-and-response-training-package>

Vann, Beth (2004), Training Manual Facilitator's Guide: Multisectoral & Interagency Prevention and Response to Gender-based Violence in Populations Affected by Armed Conflict, JSI Research & Training Institute/ RHRC Consortium, available at <https://www.endvawnow.org/uploads/browser/files/Interagency%20Multisector%20Response%20to%20GBV.pdf>

նշումներ



WOMEN
AGAINST
VIOLENCE
EUROPE